

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԱՐԻԱՍԵԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ

ԸՍՏ Մ. ԽՈՐԵՆԱՑԻՈՅ

ԵՒ ԱՆՈՐ ԱՂԲԵՐԱՑ ՎՐԱՑ

(ՏԷՍ ՀՈ. ԽԱ. ՊՐ. Ա. ԷԶ 54).

ԳԼՈՒԽ Ա.

Աղբերք Մ. Խորենացոյ. — Դպրոց հնրա-
նու կամ աղբերակներու դարու մատենագրու-
րեան, և դպրոց քրիստոնեական կամ էջեհեայ
մատենագրաց. — Պատաստարիւն միջին իմն
մշակութեան. — Մ. Խորենացի և իւր մատե-
նագրական յարցն և օգուտը. — Կնիք փաղ-
դեական մատենագրաց. — Մարիաս կատա-
նա. — Աղբերակներու մը և անոր եզրա-
կացութիւնն:

Գննենք ուրեմն ուշի ուշով և առանց
կողմնակցութեան խորենացոյ այս աղ-
բերակներն և տեսնենք թէ ինչ լոյս կը
ծագն անոր պատմութեանը վրայ,
պատմական անձանցմէ սկսելով:

Մ. Խորենացի երկու անգամ՝ Բայց
յանուանէ միայն կը յիշէ զՊերոզ, ա-
ռանց անկէ բան մը մէջ բերելու. իսկ
երրորդ անգամ՝ իւր Ա. գրոց Զ. գլխուն
մէջ ածականաբար բխուսեան Սիրիլ-
լոյի անուամբ անոր վրայ խօսած Ժա-
մանակ՝ անկէջ կը քաղէ նախալրհեղե-
ղեան պատմութիւնը հանդերձ Զը-
րուան, Տիտան և Յաբիտոսի մէջ ա-
նուամբը, ըսելով. « Յառաջ քան ըզ-
րուզն և զբազմաբարբառն ինեւրոյ ձա-
նի ազգի մարդկան ք, և այլն . . . »

Որո՞նք որ պարագեցան ի քննու-
թիւն պատմութեան և անձին Պերոզի՝
կը համարին զնա իրօք մատենագիր որ
ծաղկեալ Աղբերակներ Մեծին մօտ Ժա-
մանակներն, և կը հանեն մինչև ի վէպս

Սիրիլլոյի ուրուք. որովհետեւ նա իւր
երկասիրութեան մէջ նախնաբար դի-
մած էր ի գիրս պատգամաց Սիրիլա-
յից: Արդ Պերոզ կամ Պերոզեան Սի-
րիլլոյ եթէ համարելու ըլլանք Քրիս-
տոսի թուականին Բ. դարուն գտնուած
դրուածքը՝ շատ հին պիտի ըլլայ, վասն
զի ըստ վկայութեան Վարդոնի՝ ի մէջ
տասն Սիրիլլոյից հնագոյն և առաջինն
էր Պարսից և Քաղդէացոց Սիրիլլայն,
և Մովսէս անթերի գիմացն ունէր զայն,
ըստ գերմանացի քննադատին: Հռով-
մայեցիք և Յոյք իբրև ներկայացուցիչ
կը համարին զՊերոզ քաղդէական մա-
տենագրութեան, և զանազան վիպա-
սանութեամբ կը ներկայացընեն մեզի
անոր կենսագիրները՝ Սակայն հմուտք
ազգիս՝ Եւսեբեայ Ժամանակագրութե-
թարգմանութիւն խորենացոյ կուտան,
որ կը ցուցընէ թէ Մ. Խորենացի ան-
կէ ծանօթացած ըլլայ Պերոզի հետ. այլ
նոյնպէս հաւանական է ըսել թէ բաց
յիւսեբեայ նա ունեցեր է բիւռոսեան
Սիրիլլայի ուրիշ հատուկաբար հատուած-
քը. վասն զի Եւսեբիոսի Քրոնիկոնին
մէջ փոխանակ Զրուանայ՝ Կռոնոս ա-
նունը կը գտնենք:

Բազմավեպն Աղբերակներ՝ որ Պե-
րոզի գրուածքն և ուրիշ քաղդէացի մա-
տենագրաց հին ունեւորութիւնները տիե-
զերական պատմութեան ձեռք հաւա-
քեց, ըստ Միւլլերի (Հաւաք. յոյն,
մատեն. Բ. հատ. էջ 206) իբր թէ մեր
թուականէն դար մը առաջ էր. որ և

1 Յովս. Նախ. պատմ. Ա. գլ. Գ. Զ. Տատա-
նոս Զառ. ընդգէմ Բուռայ գլ. ՄԸ. Սինկեւրոս,

էջ 29: Պաւսանիաս Ժ. 12, 5. Եւս. Քր. Ա.
38, 39, և Սուրբաս Ե:

Հրէից հին պատմութիւն մ' ևս յօրինած էր. բայց անոր բազմաթիւ երկաւորութիւնը մեծաւ մասամբ կորսուած են: Վերոյիշեալ ուսումնականին վիճակութեանը նայելով, առ հինաւ ամենա-յարգի կը համարուէին Բազմափայլ գրուածքը, զոր ըստ մեծի մասին Բազմափայլոց և Ասորեստանեայց մատեններէն հանած էր: Ուստի ինչ մեծ հեղինակութիւն ալ ունեցած ըլլայ, այս յայտնի է թէ Խորենացի իւր Ա. գրոց Դ. գլխուն մէջ պարզապէս անոր անուան յիշատակութիւն կ'անցնի. թերեւ շատ բան ալ կարդացած ըլլայ. և կրնար ըսուիլ թէ հայ ազգի հնութեան մասին Խորենացի անկէ ներշնչուած ըլլայ. եթէ իրօք նա ունեցած չի ինէր ուրիշ հնագոյն և ճոխ աղբիւրներ իւր գիմաց, վասն զի նա 20 դար յառաջ կը համարի զՀայոց նախ քան գրիստոս և Խորենացոյ համաձայն մինչև ցԱբրահամ և անոր կը հանէ անոնց հնութիւնն և վերաբերութիւնը:

Խորենացի (Բ. գլ. Բ) զՀերոդոտոս ևս կը յիշէ իւր երկասիրութեամբ հանդերձ, ըսելով. « Որպէս յիրակաւացի պատմութեանց Հերոդոտոսայ է ուսանել, և այլն »... Այս վկայութիւնս Պրոկոպիոս ալ կը բերէ, զորեթէ ոչ փաւստոսի յունարէն երկասիրութեան հետ, սակայն շատ նման Հայոց պատմութիւնէ մը կը քաղէ, առանց հեղինակի յիշատակութեան. որով կրնանք համարել թէ երկու վկայութիւններն ալ մէկ աղբիւրէ մ' օրինակուած ըլլան: Սակայն միւս կողման չուրացուիլ թէ զՀերոդոտոսն իսկ կարգացեր էր նախնաբար կամ մանաւանդ թէ գիմացն ունէր, ըստ կողմի թիւ. ապա թէ ոչ չէր կարող զայն 'ի վկայութիւն բերել աւելցնելով. « 'ի չորրորդէ (Դ գրոց) որ յաղագս բաժանելոյ զորոյր զերկիրս յերիս մասունն. և կոչեալ զոմն Եւրոպէ, և զոմն Ասիոյ, և զոմն Ասիոյ, ուրում և տիրեաց Արշակ ու »:

Դարձեալ Հերոդոտոսի ոչ միայն համբաւն ամենամեծ նշանակութիւն

ունէր Խորենացոյ գիմաց, այլ նաև անոր պատմութեան գիրքը, որ հին ազգաց և մանաւանդ Հայոց մասին կարեւոր տեղեկութիւններ կը պարունակէր: Նոյնպէս յոյն Հերոդոտոսին պէս հայ Հերոդոտոսն ևս Աթահակայ թագաւորութիւնը պատերազմաւ կիւրոսի ձեռք անցած կը համարի. երկուքն ալ տեսլամբ կամ երազով կը սկսին Աթահակայ պատմութիւնը, և Հերոդոտոսի յիշած Արիստէ տիկնոջ տեղ Տիգրասնուհի կամ Անուշը գրեր է:

Այսպէս նաև ըստ դիպաց կը յիշէ Պտղոմէոսի աշխարհագրութեան ձաւնապարհադրքը, բայց հաւանօրէն իւր աշխարհագրութիւնն յօրինած ժամանակէն ունէր այս երկասիրութիւնս և յետոյ ալ գուցէ օգտուած ըլլայ:

Սակայն իբրեւ բուն աղբիւր, և ամենէն հաւատարիմ և սիրելի Խորենոյ ծերոյն կ'երևի թէ Արիշտէնոս ըլլայ, զոր կը յիշէ իւր հատուածներով նաև Եւսեբիոս: Հին պատմաբան մ' է այս, բայց նոյնպէս անստոյգ ժամանակաւոր գրեց ըստ Եւսեբայ՝ Մարաց և Ասորեստանեայց պատմութիւնը (Եւս. Պատր. Աւ. Թ. գլ. Դ.): Ընդմիջ իւր Արիշտէնոս ազգաց պատմութե մէջ (հտ. Ա. էջ 42) կ'ըսէ, թէ Աղեքսանդր մեծին յաջորդաց ժամանակակից յոյն Բազմափայլ մ' է, որ գրեց Հայոց տասը նահապետաց աղգաբանութիւնը: Ասկէ կ'առնու կամ լաւ եւ ըսելով, ասոր համաձայն կ'առնու, զէ Խորենացի նախաջրհեղեղեան նահապետաց, ջրհեղեղին, չառարակաշիւ ինութեան, ազգերուն բաժանման, Բազմափայլոց և Հայ նահապետներուն աղգաբանութիւնը՝ մինչև ցԱբրայ գեղեցիկ:

Կեկիստիոնի ինչ ժամանակ ապրիլ չի գիտցուի. ազգաւ թերեւ յոյն: Սուրբ Դատ այս անուամբ գրիչ մը կը յիշէ Աղբիւրոսի ժամանակակից և անոր կուտայ իմն ցիրք երաժշտութեանց: Սակայն այս բոլորովն տարբեր չէ և յետոյ ժամանակաւ, և ոչ պատմաբանն կամ վիպագիրն՝ զոր կը յիշէ Եւսեբիոս (Bibliotheca, LXVIII) կը յիշ-

չէ դայն իբր պատմիչ որ գործոց նի-
նոսի և Շամիրամայ ցմեծն Ալեքսանդրի,
երկու անգամ կը յիշէ զնա խորենացի,
մէկ մը (Ա. գլ. Ե, էջ 35) իւր այս քա-
նի մը տող Հատուած իկով. « Մանր զա-
մենայն յիսկզբան մերոյ աշխատու-
թեանս սկսաք գրել զաղգարանութիւնս
'ի դիւանացն արքունի, այլ առաք հրա-
ման 'ի թագաւորաց թողուլ զանշանից
և զվատաց արանց 'ի հնոցն գոյնատա-
կըն, և գրել միայն վերայ և զմասն
տուն և զաշխարհակալս նախնիս և մի
նապէտս զժամանակս մեր ծախել » :
Չայն հատուածս ոչ Եւսեբիոս, ոչ Յո-
հան Մալալա և ոչ Սինկեղոս կը յի-
շեն : Հաւանական կ'երեւի թէ այս հա-
տուած իկն, զոր մտցուց խորենացի իւր
պատմութեան մէջ, ըլլայ սկիզբն Յա-
ռաջարանին Ἰστορίαι ἐν βιβλίοις Ἑνεα որ
կը կանխէր քան զΚαίω գլուխը : Մէկ
մ'ալ (Ա. ժի գլ.) կ'առնու անկէ ուրիշ
հատուած մը Շամիրամայ Հնդկաստա-
նի պատերազմի մասին : Բայց այնչափ
հաւատք չընծայելով անոր ստուգու-
թեանը՝ կը թողու, ըսելով. « Այլ հա-
ւատի թուեցաւ մեզ որ 'ի Մար Աբայն
կատինայէ քննութիւն փաղղէականմա-
տենից քան զայսոսիկ, քանզի ոճով
իմն պատմէ և զպատճառս պատերազ-
մին » : Եւ ասով ալ գոհ չըլլալով մեր աշ-
խարհի մէջ եղած ժողովրդական զրու-
ցաց կը դիմէ, որոնք Մ. խորենացւոյն
ըսածին պէս ոչ միայն զբազմահմուտ
ասորին, այսինքն զՄար իբաս, կ'արգա-
րացընեն, այլ և զնոյն ինքն զխորենա-
ցին, թէ իրաւցընէ այնչափ դիւրահա-
ւան եղած չըլլայ և միայն յոյն պատ-
մագրաց յարեալ, և ոչ ալ ատենցող
միշտ ժողովրդական աւանդութեանց,
ինչպէս շատերը կը մեղադրեն. այլ ըստ
պատշաճի տեղւոյն և ժամանակին գիտ-
ցած է զանազանեւ զյարգելին յանար-
գէն :

Արդ Մար իբաս կատինայի վաւերա-
բանութեան առանձին և մանրամասն
քննութիւնը վերջը թողլով, կ'ըսենք
թէ բաց 'ի Հերոդոտոսէ՝ միւս հեղի-
նակներն զոր ցարդ յիշեցինք՝ Մ. խո-

րենացի հայկազանց պատմութեանը
մասին մէջ բերած է. սակայն այժմ
մենք ներողամտութեամբ մեր ընթեր-
ցողներուն կը ջանանք համառօտ կեր-
պով այն հեղինակներն ալ յիշել, ո-
րոնք Արշակունեաց պատմութեան կը
վերարբերին, կամ թէ Մ. խորենացի այն
մասին միայն օգտուած է անոնցմէ, և
ապա մեր բանադատական եզրակացու-
թիւնը կնքել :

խորենացին վերը յիշած փաղղէացի
աղբերաց և մասնաւորապէս Մար իբա-
սայ օգնութեանը հասնելով մինչև իւր
երկրորդ գրոց ժ գլուխը, այսինքն է
ցԱրտաշէս Ա, այսպէս կ'ըսէ. « Աստա-
նօր սպառնին բանք ծերունոյն Մար
Աբաս կատինայ », և թէ « Սկիզբն ա-
րացուք պատմել քեզ 'ի հինգերորդ
գրոցն Արիսկանոսի ժամանակագրի
որում վիայէ Յովսեպոս, և Հիպպոլի-
տեայ և այլ բազումք յունաց » : Եւ ման-
րամասն կը հաւատարմացընէ թէ նա
բոլորովին յեզեւսիոյ դիւանին թղթե-
րէն ամփոփեց, ուր փոխադրուած էին
նաև Մծբնայ և Սինոպի մատենադը,
որոնց ինքն իսկ ականատես եղած էր :

Իրաւցընէ զԱփրիկանոս կը յիշէ Եւ-
սեբիոս, որ էր Արգարու ժամանակակից
և սիրելի բարեկամ. և Եզեւսիոյ դիւա-
նէն հանուած ժամանակագրական եր-
կասիրութիւն մ'ունէր՝ ուսկից կը քաղէ
Եւսեբիոս : Ուստի խորենացւոյ յԱփրի-
կանոսէն ընտրողութեամբ քաղուած
մասն, որչափ որ Հայոց պատմութեան
ամենափոքր կտորն է, սակայն կը ցու-
ցընէ թէ նախ Մովսէս խորենացի զնա
'ի վկայութիւն պատմութեան Արտա-
շէսի Ա և Երուանդայ կոչեն՝ պարզ
կեղծիք չէ : Բ. խորենացին բաց 'ի Եւ-
սեբիոսէն՝ ծանօթութիւն ունեցած պի-
տոր ըլլայ նաև անոր ժամանակագրու-
թեան միացած գրոցը հետ, վասն զի
'ի քրոնիկոնին այն Արշակունի թագա-
ւորաց անուանքը չկան :

Հիպպոլիտ՝ զոր յիշեն Յովսեպոս, և
Յ. Ափրիկանոս՝ է մատենագիր որ՝ ո-
րուն գրուածներն խորենացւոյ մօտ ա-
ւանները կորսուեցան :

Կրեստսի Լիւդացւոց թագաւորի մա-
հը մեր Արաաշեսի Ա ընծայած ժամա-
նակ (Բ, ԺԳ), վկայութիւն կը բերէ առ-
այս խորենացին՝ խումբ մը յոյն մատե-
նագրաց իրենց հատուածիկներովը, ու-
րոնք են Պոլիկրատ՝ զոր յիշէ և Աթե-
նէս¹ իւր (Նախ, պատմ. Ասիոյ) հա-
տուածներովը:

Էւուգարտս Լինդոսացի՝ որու գրոյց
հատուածներն դեռ կը պահուին ցարդ-
բայց աւելի հոնտոր է այս քան պատ-
մաբան: Ուստի աւելի հաւանական կ'ե-
րևի մեզի, թէ խորենացւոյ յիշատա-
կած Եւագարտն՝ Եւագորաս պատ-
միչն ըլլայ, որ գրեց իրաւջընէ եղիպ-
տացւոց պատմութիւնն մը, զոր կը յիշէ
նաև Սուեատոնիոս և որուն երկասիրու-
թեամբը վարեցաւ Պլինոս:

Կամադորա՝ ըստ Պ. Լանկլուայի Ա.
սիոյ տարեգիր մ"է. սակայն եւոլշմիթ
կը համարի Սկամանտրոս կամ Սկամոն՝
ճարտասանական գիւտից հեղինակ մը:

Փոլեդունիոս՝ պատմիչ զքէ Տրալլացի
որուն հատակոտորքը մեզի հասուցին
Սուիդաս, Ստեփան Բիւզանդացի, և
Ափրիկանոս՝ Կրեստսի անկման մասին:

Արիստոն փելլացի որ էր քարտու-
ղար Ազրիանոս կայսեր, ծանօթ է մեզի
նայն իսկ Եւսեբիոսի (Եկեղեց. պատմ.
էջ 245), որ և Բարբրոքեպայի առաջնոր-
դութեամբ Հրէից վերջին ապստամբու-
թեան պատմութիւնը գրեց:

Որչափ որ հաւանական է կարծել
թէ ինչպէս ուրիշ շատ հեղինակաց՝
այսպէս նաև ասոր հետ Եւսեբիոսէն
ծանօթացած ըլլայ խորենացի, սակայն
միւս կողմանէ անթիտելի կերպով կ'ա-
պացուցուի թէ բայց յԵւսեբեայ Եկե-
ղեցական պատմութենէն՝ ունէր այն
հեղինակին ուրիշ հատակոտորներն ալ.
կամ գէթ սյուր կարդացեր էր. վասն
զի Ազրիանոս կայսեր բորտութեան,
Ասորեստանի և Միջագետաց բնակաց
զլուխ քաշելուն, կայսեր բազմաձեռն
բանակ մը յԱսորեստան զրկելուն և Ար-
տաշէսի իւր հրամանատարներով 'ի

Պարսկաստան դիմելուն պատմութիւն՝
բոլորովին անկախ յԵւսեբիոսէ կ'ընէ Մ.
Խորենացի վկայութեամբ Արիստոնի,
որ այս բաներուս ներկայ եղած էր,
և յականէ յանուանէ ծանօթ Արտա-
շիսի 'ի Մարաստան, որ և մեռաւ հոն
ե բարբարոսախառն հանդիսով թա-
ղուեցաւ:

Այս մասնաւոր վիպաց պատմու-
թիւնն նոյն իսկ խորենացւոյ անաչառ
քննադատն եւոլշմիթ ալ ստոյգ կը
համարի, բայց յայսմ կը մեղադրէ ըզ-
խորենացին՝ որ Տրալլանոսէն նուա-
ճուած գաւառաց յամին 116 ապրի-
տամբութեան դէպքը՝ հրէական տպու-
տամբութեան դիպաց հետ կը չփոխէ
18 տարի ետև: Ուստի Մ. Խորենացւոյ
Արտաշիսի Ա պատմութեան 'ի վկայու-
թիւն բերուած հատուկտիր չորս առ-
անձին հեղինակական հատուածներն,
որչափ որ առողջ քննութիւնը չի կըր-
նար առանց կասկածելու տյնպէս ընդ-
ունիլ, նոյնպէս ևս կարող չէ առանց
ստոյգ և պատմական հաւաստեաց մեր-
ժել:

Առջի կէտին նկատմամբ՝ կրնայ ա-
նաչառ միտք մը տարակուսիլ թէ խո-
րենացւոյ Արտաշեսի Ա վրայ պատմա-
ծը՝ նոյն է Հերոդոտոսի Կրեստսի պատ-
մութեան հետ և ճոխայուցած է Քսերք-
սեոյ Յունաց վրայ ըրած արշաւանաց
վիպով և ուրիշ դէպքերով: Բ. պատ-
մութեան դէմ՝ կ'երևի, և փոխանակ
Կիրոսի՝ Արտաշեսի ընծայած է Կրիւ-
սոսի մահը, և գուցէ վերոյիշեալ հա-
տուածոց Արտաշէսն Կիրոսի ուրիշ ա-
նուն մ'եղած ըլլայ:

Իսկ երկրորդ կէտին նկատմամբ, ու-
րիշ քննադատ մը չի կրնար հաստա-
տել թէ Մ. Խորենացի յինքենէ ստեղ-
ծեր է այս պատմութիւնս. կամ չգիտ-
նալով Կիրոսի պատմութիւնն և կամ
իբրև Կիրոսոսի մահուան վիպադրոյք՝
կեղծ վկաներ կանչած է այն չորս յու-
նական հոնտորները, դնելով անոնց բե-
րանը օտար խօսքեր և Արտաշեսի անու-
նը: Վասն զի խորենացի (Բ, ԺԳ) յետ
ըսելու. « քանզի լսեաք 'ի պատմուռ,

¹ Օրագիր ուսումն. է. IV, p. 138:

քանց ունանց՝ կիրարկի սպանեալ
գերիշտու և քարձեալ գրագառորու-
քիւնն լիդպացոց » , կը յաւելու , « բայց
քանզի քաղաքնք եւ որ աւելն զկրիս-
տոս մերոյ Արտաշէսի կալեալ և ոճով
իմն պատմեն՝ հաւանիմ » :

Ուստի խորենացին իւր կարծիքէն ա-
ւելի՝ այն յոյն մատենագրաց կարծիքը
մէջ կը բերէ , ըսելով թէ անկարելի է
այս բանս . վասն զի Արտաշէս 400 տա-
րի վերջէ է կիրորոսէն առ որով էր կրիս-
տոս : Բ. Պոյիկիրատեսի և փնդոնիոսի
հատուածին մէջ՝ Արտաշէսի քով յա-
րակից Պարթև ածականը կայ որ կրի-
րոսի բնաւ չի վերաբերիր , վասն զի
Արքեմենեան էր և ոչ թէ Պարթև և Գ.
փնտոն զկիրորոս իբրև քաղդաւսական
անուն մէջ կը բերէ , այսպէս . « Ոչ այն-
քան թշուառացաւ կիրորոս ընդ Մագ-
քուսն պատերազմելով . . . Այլ սա
(Արտաշէս) մեծամեծ յաղթանակը
պանծացեալ յիւրոցգորացն իողլտղի » :

Ուրեմն առողջ քննադատութիւնը
մեզի այս կը թելադրէ , (նախնաբար
ծանուցեալ ըլլալով խորենացոյ ան-
կեղծութիւնը) , թէ՛նա ինչպէս գտեր է
այն հատուածքն՝ իրօք այնպէս ալ տ-
ւանդած է . և թէ հեղինակ կրեսոսի և
կիրորոսի ժամանակակից այս պատմա-
կան և ստոյգ վկայութեան դէմ եղած
վրիպանաց՝ վերոյիշեալ յոյն մատենա-
գիրներն են և ոչ թէ հայ Հերոդոտոսը .
որ ոչ թէ վրիպեր է , այլ ուղեր իւր աղ-
բերաց հաւատարիմ աւանդապահ մը-
նալ , որոնք չփոխեր են , ոչ թէ զԱրտա-
շէս Ա կիրորոսի հետ , ինչպէս կը կար-
ծէ կուղշմիթ ենթադրութեամբ , այլ
կիրորոսի անունը՝ կրեսոսի , և Արտաշէս
Պարթևի անունն ալ ընդ անունն Ու-
շեղն Արտաշէսի թագաւորին Պարսից .

մէկուն պատմութիւնը միւսոյն ընծայե-
լով , և յայլում ժամանակի գործուած
իրն՝ տանելով 'ի ժամանակս կրեսոսի՝ :

Տրդատայ մանկութեան և թագաւո-
րութեան պարագայ միջոցին պատմու-
թիւնը՝ փորձիլիսանոսի կապաղովկիոյ
եպիսկոպոսին գրուածքէ մը կը քաղէ .
որ Մաքսիմիանոսէն և Դեկոսէն մինչև
ցիլիոկեախանոսի ժամանակ եկեղեցւոյ
հալածանաց պատմութիւն մ'էր և կայ-
սերաց գործերն ալ կը բովանդակէր :
Ջայս յիշէ և Ս. Բարսեղ կեսարացի :

Խորենացոյ փորձիլիսանոսի վրայ տը-
ւած տեղեկութիւնքն՝ կարծես թէ բառ
առ բառ առնուած են Եւսեբիոսէն .
անկէ գիտնիք թէ աշակերտ եղած ըլ-
լայ Որոգինեսի և գրիչ ուրիշ թղթոց .
բայց խորենացոյ ըսած պատմական
երկասիրութեան հետքն անգամ չերև-
նար . վասն զի ըստ կուղշմիթի՝ Խնչպէս
կրնար փորձիլիսանոս 311 տարուան
դէպքերը գրել , որ ըստ վկայութեան
նոյն իսկ Մ. Խորենացոյ 231 թուին ոչ
իրև պատանի , այլ արդէն եպիսկոպոս՝
Որոգինեսին խօսքերը կը լսէր : Այս
կէտս իրացընէ այնպիսի երկասիրու-
թեան մը ստուգութեան վրայ կասկա-
ծել կու տայ : Սակայն կրնանք ընդու-
նիլ թէ խորենացին՝ փորձիլիսանոսի հով-
անուն գործոյն շարունակութիւնն իբ-
րև անոր յատուկ երկասիրութիւն ա-
նուաներ է :

Երբ Մ. Խորենացի կը հասնի իւր
պատմութեան այն նշանաւոր կէտին
յորում Արտաշէսի ձեռքով Պարթև թա-
գաւորաց հարստութիւնն 'ի Պարսս կը
կործանի և Սասանեանց գահը կը վե-
րականգնի , կարծես թէ անկէ վերջը բո-
լորովին պարսիկ և ասորի աղբերաց կը
գիմէ : Արտաւազդայ Բ մինչև ցիտս .

1 Այսպէս կը պատճառաբանէ քաղմահման
Ջամէան (Պատմ. Հայոց . հտ . Ա . էջ 198) վը-
կայութեամբ Գաեռոփոնի , Կաեսարի և Դիո-
գոր Սիկիւրացւոյ , այս դէպքիս վրայ հիմնեալ
թէ Գառնէի Հարձորդւոյ էին երկու որդիք . ա-
նունք երեցուն՝ Արտաշէս , որուն յանձնեց Պար-
սից թագաւորութիւնը , իսկ երկրորդին՝ Կրտորն
կիրորոս , որուն առաւ զմարզպանութիւն Լիւ-
գացոյ աշխարհին . սակայն զայրացեալ ընդ այս

Կիրորոսի պատերազմի ելաւ Արտաշէսի վրայ .
յորմէ յաղթուելով շարաշար սպանուեցաւ :
Այսպէս անշուշտ այն յոյն մատենագիրներն
(404ին) Արտաշէսի (Ուշեղի) զկիրորոս եղբայր
իւր , որ էր Լիւգացւոյ մարզպան , ձերբակալե-
լով սպանուեց : Արտաշէսին ընծայեցին , որ
116 տարի միայն յառաջ է քան զՔրիստոս : Այ-
սու մեկնութեամբ եթէ ոչ իրն այլ գէթ Խորե-
նացի կարէ արգարանալ :

րով Ա աշխարհածանօթ Բարդուհայնէն¹ կը քաղէ իւր պատմութեան նախատարերը, որ Քրիստոսի թուակաւնին երկրորդ դարուն ծաղկեցաւ յիշեսիաւ Բարդաժանին երկասիրութիւն ուսկից խորենացին շատ օգտուեցաւ, Ուղիւրի պատմութեան մէջ պարունակուած մեհնական և թագաւորաց գործոց վրայ գրուած մ'էր. մանաւանդ թէ անոր ասորերէն թարգմանութիւնն, յորում աւելցուց ինչ ինչ իրեն քովէն Բարդաժան:

Խորենացւոյն ասոր հեղինակութեան, վաղենտինեան հերձաւածին յարուելուն, Մարկիոնեանց դէմ գրելոյն և անոր առ Ունտոնիոս ոմն ըրած տրամախօսութեան վրայ տուած տեղեկութիւնները կը գտնուին նաև առ Էւսեբիոսի. սակայն ասկէ չենք կրնար հետեցնել թէ Մ. Խորենացին՝ Էւսեբիոսէն դուրս անոր ուրիշ երկասիրութիւն մ'ունեցած չ'ըլլայ: Այլ մանաւանդ մենք ընդհակառակն կը տեսնենք, այս հետեւեալ պատճառաց վրայ հիմնեալ. թէ բոլորովին նոր բան մ'է Բարդաժանի Հայաստան երթալուն, զանոնք աշակերտելուն և ՚ի վերջէ անոնցմէ վնասուելուն յիշատակութիւնն. դարձեալ անկէ ալ յամուրն Ունի երթալը, զմեհնական պատմութիւն կարդալն, յորում էին գործք թագաւորաց, աւելցրնել յայն և «զոր ինչ առ իւրեան» և ամենայն ինչ ՚ի լեզու ասորի փոխեն, յատուկ պարագաներ՝ զորս Խորենացի (Բ. գլ. ԿԶ) միայն մանրամասն կրնկարագրէ: Բարդաժանի պատմական երկասիրութիւն մ'իբրոք ըլլալուն՝ կը վկայէ նոյն իսկ Խորենացիէն մէկ ու կէս դար առաջ Ձենոր Գլակ պատմագիրն, ըսելով. «Ընթերցիր զթագաւորութիւն Հեփթաղինեկայ Հեղենացի գրով, և կամ զթագաւորութիւն Ճենաց գորդէ տանես յՈւռհա քաղաքի, առ Բարդաժան» (Բարդաժանայ) պատմագրի:

Իսկ Էւսեբիոս անոր տրամախօսութեան յիշատակութիւնը միայն կ'ընէ, որ յայտնի ապացոյց է թէ անոր վերոյիշեալ երկասիրութիւնը չունէր: Արդեւ թէ այսպէս է, այն ժամանակ անտեղի է ըսել թէ կեսարացւոյն հեղինակութիւնէն դուրս ուրիշ պատմական հեղինակութիւն ունեցած չէ Խորենացի:

Արդար և Սանատրուկ թագաւորաց ժամանակի պատմութիւնը՝ մեծաւ մասամբ Էդեսիոյ դիւանագարի մ'երկասիրութենէն քաղած է, զոր ինքն (Բ. ԼԶ) որդի Ալիշադարայ կը կոչէ, ըսելով. «Գրեաց (Ղերուքնա) զամենայն գործս» որ ինչ յաւուրս Արգարու և Սանատրուկ և եղ ՚ի դիւանին յեդեսիա ա Մինչև ցամա 1852 Մ. Խորենացւոյ վրկայութեամբ կը ճանչնայինք միայն զնա իբրև դպիր Էդեսիոյ դիւանին: Սակայն Ուղիւրի, Մար-Արտա Կատինայի և ուրիշ կորսուած և անծանօթ մատենագրաց կարգէն կը համարուէր, և ըստ օտարագրի ուսումնականաց գուցէ հայ Հերոդոտոսի երևակայութեանը լոկկեծ ծիւր մի: Սակայն վերոյիշեալ թուակաւնին վերնեղով միսթարեան ուսումնատենչ Հայոց Հ. Ղևոնդ Ալիշանի և Հ. Սուքիաս Պարոնեանի ձեռքով, (որոնք Բարիզի մատենագրարնի և հայերէն ձեռագրաց քննութեան կը պարագլխին), գտնուեցաւ յերկաթագիր ճառերնորի մը կամ Տօնամակի մը մէջ, որ ըստ Հ. Ղ. Վ. Ալիշանի յԺԲ դարուն գրուած է, այն անծանօթ հեղինակին Արգարու թուղթը նոսխեաց թարգմանութեամբ: Սակայն այսու ոչ դժուարհաւան մըտքերն համոզուեցան բոլորովին, և ոչ ալ Խորենացւոյ վկայութիւնն ըստ ամենայնի հաւատարմացաւ, այլ և այլ են թագաւորութեանց պատճառաւ: Ուրեմն բոլոր այն մտքերն յաղթահարող և խորնացւոյ յաղթանակ կանգնողն եղաւ յամին 1863 անդդիացի բազմահմուտ ասորագէտ Գիւրբադինի երջանիկ գիւն:

¹ Գամստիկայն, Ս. Հերոնիմոս, Նիկեփոր, Օգոստինոս և Ստեփանի արեգբարհաչափ այր կ'աշուանեն զնա: Թէպէս ՚ի սկզբան հաւատարիմ ճշմարիտ վարդապետութեան Եկեղեցւոյ, իւր

ճարտասանական բռնն զօրութեամբ կը յաղթահարէր զհերետիկոս, բայց կենաց վերջի տարիներն ինքն ալ ինկաւ վաղենախնեանց մոլորութեան մէջ:

տին հրատարակութիւնն, որով նիտորիոյ անապատէն բերուած ասորի ձեռագրաց մէջէն ելաւ նաև կորսուած հեղինակիս ասորի բնագիրն, և անոր ուղիղ անունը, որ է Ղերշաթնա կամ Լաբուրնա, որդի Սենակայ:

Գիւրբղոնի և Ալիշանի հետ կրնանք ըսել թէ արդարև մեծին Արգարու ժամանակից դիւանադպիր մի էր Լաբուրնա: Այսուհետև ոչ եթէ խորենացւոյ վկայութիւնը, այլ մի և նոյն հեղինակին նորագիւտ թղթին վրայ հաստատուած, որոնք մի մասը խորենացիէն յառաջ կը համարի անգղիացին, այսինքն 'ի սկիզբն է դարու գրուած իսկ բովանդակն 'ի միասին առեալ՝ բոլորովին տարբեր թարգմանչի գործ է և տարբեր ոճով թարգմանուած, կ'ըսենք թէ Արգարու քրոյն, կամ Թադէի վարդապետոյն (ըստ բնագրին) իսկական մասունքը նա գրեց, և նոյն իսկ զեղծիոյ թագաւորաց շատ գործերը:

Սակայն Ասորի հեղինակիս՝ Արգարու որդւոյն Անանայ և Սանատրկոյ ժամանակ հանդիպած դիպաց և գործոց կորուստը, զորս խորենացին տեսած է, անկէ օգտուած և կը վկայէ, ցաւալի է և գիւտը յուսալի, ուստի կը փափագինք թէ ոչ կամ շուտ այն մասն ևս յայտնուի:

Պարթև թագաւորաց վրայ խօսած ժամանակ՝ մասնաւոր համակրութիւն ունենալով առ յոյն պատմագիրս, մէջ կը բերէ զմասնս. օրինակ իմն զՊաղեսփառոս, զոր կը յիշեն նաև Սուրբաս և Ստեփան Բիւզանդացի: Միւլէր երեք հեղինակներ կը յիշէ այս անուանակոյ չութեամբս. բայց խորենացւոյ յիշածն հաւանօրէն Τρωίχα գրոց հեղինակն եղած պիտի ըլլայ:

1 «Որպէս են աւուրք (սովորութեան) թագաւորաց, և թագաւորութեան Արգարու թագաւորի, զի ամենայն ինչ զոր հրամայեն թագաւորը, և զամենայն ինչ որ միանգամ լինի առաքի նոցա, գրի և զնի 'ի տունս յիշատակաց: Այնպէս և յաւանայ քաղաքի Լաբուրնայ որդի Անակայ որդւոյ Արգարուայ դարի թագաւորն:

Պարթիշոյ ոմն տիւրացի որ գրած էր Պարթևաց և Հայոց պատմութիւն, որու հատուածքն կը գտնուին ցարդ 'ի գործս Ս. Հերոնիմոսի, 'ի Մեկնութեան Դանիելի մարգարէի (Հտ. Ե, էջ 667, 703, 722): Փիլիսնուս որ բալորովին անծանօթ է: Սակայն առանց մէջ բերելու ասոնց մէկ երկասիրութիւնն և կամ անոնց մէկ հատուածն, կ'անցնի նորէն Պարսիկ հեղինակութեան մը, ըսելով. «Բայց մեք ասասցուք 'ի մատենէն զոր երբ խոշոնքուտ զխարսումայի», (Բ. գլ. Կթ): Երկուքն ալ ազգաւ պարսիկ են և Յուդիանոս ուրացիով ժամանակ գերի ինկան, որոնց առաջինն, ըստ Ս. Խորենացւոյ, գրագիր էր Պարսից թագաւորին: Սակայն խորենացին որպէս զի պարսկասէրներուն միտումը մեղմէ առ այնս, և յունասիրաց ալ չափազանց ատելութիւնն, անոնց ոչ միայն կրօնքը այլ նաև անունները փոխելով զթոռոհբուրը Եղիազար կ'անուանէ. այլ անոնց ազգութիւնը բոլորովին չի ծածկեր այնպէս՝ որ ալ չիմացուին: Թէպէտ և այս այսպէս դատած ժամանակիս՝ չենք կըրնար առանց թէութեան հաստատել, թէ իրօք այնպէս եղած չլլան:

Տիրանայ որդւոյն Արշակայ Բ Պարսից Շապուհ թագաւորին հետ ըրած պատերազմաց և անոր մանրամասն դիպաց պատմութիւնն ըրած ժամանակ, ամենէն աւելի փաւստոս Բուլանդացւոյն պատմական երկասիրութեանն օգտուած կ'երևի, կամ գէթ Նախնաբար հմտացած, թէպէտ և անոր անունն և գիրքն ազգին ծանօթ ըլլալուն պատճառաւ թերևս կը լռէ:

Սակայն ոյս վերջին ժամանակներս յոյն ձեռագրէ մը, որուն հայերէն թարգմանութիւնն ևս կայ, տեսնուեցաւ թէ Մովսէս խորենացի ուրիշ անծանօթ

գրեաց զամենայն ինչ զոր միանգամ իրք եղեն Ագէի առաքելոյ, 'ի սկզբանէ մինչև ցկաաբաժ. միաբանութեամբ ձեռն արկանելով և Անանայ հատաարարի թագաւորին, և եղին 'ի տան յիշատակաց. քարտեանց, ուր գնին մատենք և օրէնք արքունականք»:

յոյնհերինակի մը երկատիրութեանն ևս իբր թէ հետեւած ըլլայ 'ի մասին ուրեք, հայդիսքնէն անուն մատենագրին : Իւ այն երկատիրութեան, այսինքն Աղեքսանդրի պատմութեան մէջ, Մակեդոնացի աշխարհակալին առ Տիւրացիս գրած նամակին նմանօրինակ նամակ մը մէջ կը բերէ, զոր իբր թէ Շապուհ կ'ուղղէ առ Տիգրանակերտոցիս : այսպէս նաև Պարսից թագաւորին զՏիգրանակերտ պաշարելուն անորս պառնալեացն, քաղաքին աւերման, կործանման և զոր ծեաց նկարագրութիւնն ըստ ամենայնի գողցես նման է Աղեքսանդրի զԹեմէ պաշարելուն նկարագրութեան, և ուրեք բառ առ բառ իսկ, զոր կ'ընէ վերոյիշեալ Կալիսթենէն : Անտի այս անակնկալ դէպքը, եթէ յորտ արտօքին երևութիւն միայն նայելու ըլլանք, խորենացոյն վրայ ունեցած վստահութիւնն կը նուազեցնէ : վասն զի Բու-

զանդաքին՝ Շապուհ իւր զանազան զօրավարաց ձեռքով՝ Արշակայ հետ ըրած երեսնամեայ պատերազմունքը և հուսկ Մերութանայ առաջնորդութեամբ ըզ-Հոյաստան աւերեն մանրամասն գրելով, այս նամակիս և Տիգրանակերտին նկարագրութիւնը յայտնապէս չընէր : Սակայն եթէ այն նամակին և մասնաւոր կերպով Տիգրանակերտի նկարագրութեանը ներքին հանդամանաց և պատմական կէտերուն, (որք են, Շապուհ անձամբ Տիգրանակերտի վրայ արշաւեն, զայն պաշարելն, առ քաղաքացիս ըրած բանագնացութիւնն և այն քաղաքին առումն և կոտորածն), և երկրորդաբար ալ եթէ Հայ Հերոդոտոսին հռետորական ճաշակին լաւ ուշ դնելու ըլլանք, այն երկուքն ալ կրնան ստուգիւ եղած և վաւերական՝ ըլլալ, ըստ հիման :

Ահաւասիկ կարծեցեալ մարտասան

1 Ա. Մ. Խորենացոյ նամակին համաձայն՝ ուրիշ նամակ մը մէջ կը բերէ Ամմիան (Ժէ, 5), և Բուզանդացիին իւր ('Ի գալուստն) մէջ ոչ միայն մէկ նամակի՝ այլ և Շապուհ զանազան նամակաց, բանագնացութեան և դաշնաց յիշատակութիւն կ'ընէ ընդ Արշակայ, ընդ Թագաւորութեան Յուսակ, և ընդ նախարարս Հայոց, մերթ Ժամկապէս, մերթ սպառնալեօք և երբեմն ալ մեծամեծ խոտամաք իրենց Թագաւորին և աշխարհին դէմ՝ ապստամբներն ըլլալ զգրուէ : Բ. Փաւստոսի մի և նոյն գալուստեան ՄԸ զիտուն մէջ, որուն վերնագիրն է « Յաղապս զայլոյն Մասայց Թագաւորին Պարսից յերկիրն Հայոց », կը տեսնուի, 1. անոր անձամբ Տիգրանակերտի վրայ արշաւեն, 2. եթէ այն կրկին նամակաց և նկարագրութեան, զոր կ'ընէ Կալիսթենէն և Մ. Խորենացի, ներքին և արևելք հանդամանացն և մանաւանդ ուրիշ արտաքին և տոյմային պատմեաց վայելութեան ուշ դնելու ըլլանք և խորք քննել, չէիք կրնար այնուհետև այն վերջ յիշած պատմական կէտերուն և Խորենացոյ հաւատարմութեան վրայ երկբայեւ թէպէտ և այն վերոյիշեալ կէտերը ոմանց չստեղծուելով զուցէ կասկածել ըլլան և իմրութեան իսկ : Արգարեալ Խորենացոյ բերած նամակին և Տիգրանակերտի առումն նկարագրութեան համաձայնութիւնն ընդ Թիգրան և Նիկարագրութեան Կալիսթենիսի պատահական է և միայն աննշան բառից և ոճոյ մէջն է : Իսկ պատմական կէտերու մէջ՝ բոլորովին այլ աղբ է և իւրաքանչիւրին մէջ յատուկ ժամանակի և աղբի գէպքեր չջգլմուած են և կը յիշուին, զորս չէ կարելի շանդրագանալ մտաջի դը : Զանց կ'ընենք զանոնք զիմաց զիմաց մէջ բերել, այլ ուշուր մեր 1878 ԲԱՅՄԱՎԻՐԻ

Ա. Պրակին կը զրկենք : միայն վերը բաժնէ կէտերը մէջ կը բերենք :

Կալիսթենիսին և Խորենացոյ նամակաց նախ վերնագիրքը տեսնենք :

Յոյն հելլենական այսպէս կը գրէ. « Քաղաւոր Աղեքսանդրոս... մեծ ինքն Թագաւոր Եւրոպայ, Ասիոյ, և Լիբիոյ, Մուսուրացոյ որք ոչ ևս են անհայն » :

Իսկ Խորենացին այսպէս. « Մալքեանք քաջ Շապուհ արտոյն առաջ Տիգրանակերտաց որք ոչ ևս էք անստանելոյ՝ ի մէջ Արեւոյ և Անարեան » :

Իսկ զալով Թեբէի և Տիգրանակերտի առումն, յոյն այսպէս կը գրէ. « Աղեքսանդրոս առեալ զգործն և Զանապարհաւ անցեալ դնաց 'ի Թեբայիս և խորեանց 'ի նշանէ զնաւորս քաջ զորս հաւաք և զհորին և Թեբայեցիք արկեցին զգործուն » :

Իսկ Խորենացին ընդհակառակն. « Իսկ Շապուհ Էկեալ 'ի Տիգրանակերտ քաղաքս արկեցին ընդգրծման... և ապալակէին : Ինչ 'ի մէջը Շապուհ... զի մի չարիս յերկրորդս ընդ քեզ... քան զառաջին անգուցանմը » :

Խորենացոյ զՇապուհ Տիգրանակերտի վրայ քաղցընելն՝ ըստ ամենայնի համաձայն է Ամմիանոսի, որ ահաւորաբն իսկ զիս և այն աղեակից փախտանքս զերծաւ և իւր Ժժժ գրոց մէջ ուժով կը նկարագրէ : Հայ Հերոդոտոսի այս բառերը, քաղաքս աղեակէն և յերկրորդս քան զառաջին, մասնաւոր պարագայներ են՝ որք հռոմայեցի պատմին հետ համաձայն կ'ընթեանան, և յուշեն լաւ կը տարբերին, զի պատմէ թէ Շապուհ առաջին անգամ վտանալ 'ի Տիգրանակերտոցոց չորեւս 'ի Մծրին և պատարասուելով՝ « Amidam (Տիգրանակերտ) die tertio venit, զ'ըստ » :

Եւ ըստ զայանց ուխտին՝ ստուգելու ասպարեզ և նախապէս այն երկարատեւ պատերազմաց ոչ

կամ Մ. Խորենացոյ պատմութեան պատմական աղբիւրքն: Ինչպէս կը տեսնեն ընթերցողք, ամենքն ալ անձանօթ և աննշան հեղինակներ չեն, որոնց համար կը մեղադրուի Խորենացի. մասնա-

միայն Միջագետք էին և հարաւային կողմանք Հայոց, այլ և առեւել զՏիգրանակերտ և ըզ. Մծբին:

Պարոյց բանակին մէջ կը լիէր Խորենացի գե. րեալ Յոյներ. և այս իսկ համաձայն կ'ընթանայ ընդ աշտաթին պատմագրութեան, որովհետեւ ըստ Ամ. Մարկեղոսի, Վաստակոյ հետ ըրած պատերազմում գերած էր զանոնք Տապուհ, Սարինոս Ժեր ներքինոյն վատութեամբը:

Խորենացոյ Տիգրանակերտի քաղաքը Պարոյց հետ ըրած խոսակցութիւնն և բանագնացութիւնն և պաշարան անուաւոր գործում նկարագիրն ևս՝ Ամիսանոսի վկայութեամբը կրկին հաստատուած կ'ըլլայ, եթէ վերտօնի Հռովմայեցոցն ԺԻՔ՝ բոցը դիմէր, յորում կ'ըսէ նա. «Satisque eum constabat colloquio tenus difensores moenium tentaturum.» և մանրամասն կ'ընկարագրէ զամենայն. այնպէս որ 'ի նկատումն ընկնալով հեղինակին՝ Տապուհ Տիգրանակերտի վրայ երկրորդ յարձակումը, քաղաքացոյ զըռները բոցելով պարսպի վրայէն խոսակցութիւնն, որ կը յիշատակէ և պատերազմումը. այն ահաւոր միջենայից կազմութիւնն՝ Ամուսինոս հռովմայեցի գասալիք զօրավարին հնարիւք յԱնտոնինոս ամրացուցեալ պարսպաց նշարարիտար ընկել, զոր Խորենացի 'ի Հայկազնոյն Տիգրանայ կ'ըսէ (գիտելով ընդ Հերոդոտոսի՝ թէ նախնաբար Հայոց կը վերաբերէր Միջագետքաց այն մասը, ևս առաւել Պարթևաց հարստութիւնն հաստատուելուն ժամանակ, ըստ յետմէ ժամանակի պատմագրաց). քարանց, կրակի և նետերու կարիւռաւոր պարսկական ձեռնառ և օրոյն գործած նախճիրն, պարսկապիներ վազած ուսանելոց արեւը, փայտակերտից չորձութիւնն և զազնուականն Հայոց և Հռովմայեցոց անարգանքը գերի տանելն, որոնք 'ի մի բերելով Խորենացոյ թղթին իսկական հիւր և բոլոր նկարագիրը կը կազմեն. այնուհետև կը համարձակինք ըսել, թէ Բուզանդէն և Կալիսթենէսն աւելի՛ Ամիսանոսէն օգտուած ըլլայ Խորենացի, որուն հետ կամ 'ի Հռովմ և կամ 'ի Ինկալդիզմն է. զան միջոցին՝ Ժանօթացած է: Վասն զի բովանդակ լրեմնացս պատմութեան Թագաւորաց Արշակունիաց, զոր կ'աւտորէ սուրճային մատենադարձութիւն, Արշակայ Բ մասին՝ ըստ ամենայնի և կատարեալ համաձայնութիւն կը տեսնուի ընդ հռովմայեցի պատմչաց:

Ուստի Խորենացոյ առ Կալիսթենէս գիմելու նպատակն այս մասին, ուրիշ բանի համար չէ, բայց եթէ Տապուհ այն բանաբարութեան և Տիգրանակերտի աղետալ աւելի վնաս և հաւատարեկան ձև տայ, զՏապուհ՝ Աղեքանդրի, և զՏիգրանակերտ՝ Թեբէի նմանցընելով, ինչպէս Ամ. միսնոս ալ Թեապոլացոյ զօրավարին և Տրոյոյ ուղած է նմանեցընել, եւ ո՛վ գիտէ թէ նայն իսկ

ւանդ քունի որ Եւսեբիոսի Գրնիկոնի նախնեայ թարգմանութիւնն բազմափաստակ Հ. Մկրտիչ Աղեքեանի ծանօթութեամբ հրատարակուած չէր: Այժմ 'ի բաց առեալ զսմանս ցարդ

գտողն Տապուհ զնոնք այն մեծ աշխարհակալին չէ ուղած նմանցընել, որու համար կ'ըսէ Ամիսանոս, թէ ազամանդակապ խոյր 'ի գլուխ և Զառագայթարձակ՝ բանակին ստիկն անցած իորոտապանձ կու գար: Իսկ Կալիսթենէսն այն (թերևս համահուն Կալիսթենէսն ըլլայ որ առաջնորդէր Աղեքանդրի 'ի Բաբելոն և անկէ աստեղաբաշխին տեղեկութիւնները կը զրկէր առ Արիստոսէլ, ըստ Փ. Շմթի), հաւանորէն հոգաւոր դը էր և ոչ պատմաբան, որոնք նոյն ժամանակները, ըստ տեղի ուրուան, իրենց հանձարն ու պերճարան լեզուն ծննդելով, 300էն աւելի Աղեքանդրի պատմութիւն գրեցին Զարտաշան, օրէն քան պատմաբար, և Խորենացին ուրիշ կերպով անոր այնչափ յարգ չէր տար գիրաւ, այլ իրեն հոգաւորական գրիչ՝ որ ունէր առ իւր, յԱթենս գտնուած ժամանակ, և որուն թարգմանին իսկ ինքն եղաւ հաւանորէն:

Իրաւցընէ եթէ Խորենացին այն նամակը և Տիգրանակերտի առումը Կալիսթենէսէն օրինակէ, ինչ պատճառաւ անոր անուան չ'իյնէ՞ր զոր պէտք էր յիշել՝ յարգի և հաւատարմիցով. ջրնելու համար իւր հաւատարէր: Թերևս ըսուի, ցուցընելու թէ յարգունի գիւնէն էր այն նամակի պատճէնը: Սակայն այս չի կոնար Խորենացոյ շարժառիթն եղած ըլլալ, որովհետև բնաւ արգելոնի դիւանի անուն չի տար, զոր պէտք էր թողուլ, եթէ ստուգիւ այնպիսի կասկած մ'ունենար:

Ուստի աւելորդ է այլ ևս խօսելն այնպիսի առարկութեան մը վրայ, զոր հմտադոյնք անգամ գառաւորք Խորենացոյ, թերևս Զաննիւնով հանդերձ զայն մատենագիրն՝ զարձակ չը համարձակեցան իրեն եղակացուցիչ փաստ իրենց կարծեացը մէջ բերել, ընդ գէ՛մ Խորենացոյ, գիտնալով թէ ոյսպիսի նմանաձայն նշկարագրութիւնից յաճախ են վասն զինանաստիպ արկածք և պատահալք՝ շատ քիչ նմանօրինակ գրուագիւնք կ'ունենան:

Բաւական է առ այս բանալ Ա Մակաբայեցոյ 'ի գլուխը, յորում Մատթի 'յԱքբաշամէն սկսեալ բոլոր նահապետաց անուանքը իրենց լաւութեամբք հանդերձ չի կոչէ իրենեւրուն 'ի խորխոյն և Սիլիէի Ե Յեղանակը, ուր Վանդ երէց գոցցեա բառ առ բառ նոյնը կը երկրորդէ: Դարձեալ Ա Մակ. Թ գլխուն մէջ Յուգա Մակաբայի նահապետութեան, Սիլիէի մէջ՝ քաջին Վարդանի և Բուզանդայ 'ի զարմիք գլխուն մէջ Բագոսի յարձակման նկարագիրը, գրեթէ բառ առ բառ նոյն են: Ուրեմն հետեւեալս այս պատճառաւ միայն ինչպէս այն երէց հեղինակներն՝ այսպէս նաև զՄակսե Խորենացին և բոլոր իւր պատմութիւնն անվաւեր համարե՞լ՝ բանաւոր և իրաւացի չի կոնար ըլլալ:

յիշատակելոց և զորս զանց ըրինք յիշել և այլուր պիտի խօսիլնք, մնացածն հինքն եթէ անցելոյն և եթէ ներկայ դարուս մէջ իրենց անգին և զոյգնագիւտ հատուածներովն ամենամեծ արժէք և հեղինակութիւն ունին, և Հայոց դրացի ազգաց, և հաւանօրէն անոնց հետ սերտ վերաբերութիւն ունեցող հնոյն Հայաստանի աւանդութիւնները պարունակելով՝ կրնային խորենացոյ մեծ լոյս տալ և տուն իրօք:

Դարձեալ ո՞վ չի տեսներ նաև Կուղչմիթի խորենացոյ վրայ ըրած ենթադրական քննադատութեան անհիմն ըլլալը, որ կ'ըսէ, թէ խորենացի ամենէն աւելի պարսկական ազդեցութիւնն օգտուած է, բայց կը կեղծէ և յանուանէ չի յիշեր զանոնք: Այսու սուտ զրպարտութեամբ Գերմանացի քննադատը կ'եղծանէ հայ պատմահօր հաւատարմութիւնն, և թողլով անկէ վերջը բոլոր անոր նոյն իսկ հաւաստի վկայութիւնն հինքն ալ մակամոտածական նմանութիւն և դէպք և անուն չի մնար՝ զորս իւր պատմական մեծ հմտութեամբն անոր հակառակ չբերէ և չխուկէ:

Ընդ հակառակն, խորենացին ոչ միայն իւր Ա. Գրոց Բ, Գ և ԻԱ, և Բ. Գրոց ԽԶ գլուխներուն մէջ յաճախ կը յիշէ Պարսից գիւղերն և գրքերը, յորս կը վրկայէ թէ էին մինչև անգամ « Հայոց տանց գիւղից անուանց և հանուրց հակառակութեանց և դաշանց և անբաւ զրուցաց բանք », (որ է ըսել թէ կարգացեր եմ և ահա ձեզի կը հաղորդեմ), այլ նոյն իսկ երկրորդ գրոց ԽԶ մէջ բերելով Ուղիւպ քովի պատմութիւնն՝ Արտաշեսի նկատմամբ, յայտնապէս կ'ըսէ. « Որում և Պարսից մատենքն վկայեն և Հայոց երգն վիպասանաց », և Դ. գլ. յանուանէ մէջ կը բերէ զԵղիսիմուհի զպիւր թագաւորին Պարսից և զԲարսումայ ընկերակից նորա, հանգերձ իւր պարսկական անուանակոչութեամբն, բնելով « Զոր Պարսիկք Ռաստատհուն կոչեն »:

Ուստի խորենացոյ պարսիկ աղբւրաց՝ յորոց օգտուեցաւ, ամենուն առաջինը չիլիշին՝ ոչ եթէ կեղծելու դիտմամբ է, այլ վասն զի ամենուն ծառայէ էին անոնք. այսպէս կը վարուի նա ևս և տոհմային մատենագրաց յիշատակութեան մասին, զանց ընելով անոնց անուանքը՝ գրեանքը միայն կը յիշեցնէ:

Հիմայ տեսնենք թէ ինչպէս այսպիսի զանազան հիպոթեզայ հաւաքածուններով, որոնք թէ ժամանակաւ և թէ նպատակաւ մէկ մէկէ հեռու են՝ կրցաւ հայ Հերոդոտոսը միաբանել առանց հակասութեան և ամբողջական Հայոց պատմութիւն մը յօրինել, և թէ ինչ աստիճանի յաջողութիւն է յայնմ:

Իրաւցնէ յիշեալն նկատելով՝ խորենացի առաջին եղաւ և էանտարակոյս, որ ոչ միայն այս արտաքին հեղինակութեանց՝ այլ նոյն իսկ տոհմային մատենագրաց, Ագաթանգեղոսի, Բուզանդայ, և այլոց վրայ, որոնք չիշատակեցինք, ընելով իւր պատմական ուսումը և առանց մեծամեծ ինչ տարաձայնութեան կամ հակասելու անոնց պատմութեանը, ընդհանուր նկատելով, կատարելագործեց զանոնք, և ճշգրտելով և ճշտադրեցելով բոլոր ազգային աւանդութիւնը, Հայաստանի ամբողջական և չքննադ պատմագրութիւն մ'ի լոյս ընծայեց:

Իւ այս հետագայ կարեւոր կէտերու քննութիւնը կ'ապացուցանէ թէ խորենացին ոչ թէ իրմէ, այլ ի Բուզանդայ և յԱգաթանգեղոսէ, և լաւ ևս բնելով, ուրիշ անոնց համաձայն ազգին կենդանի աւանդութիւններէն առնելով՝ յօրինեց իւր պատմութիւնը: Նախ, խորենացիէն յառաջ փառասոս Բուզանդացին իսկ գիտէ « Կեսարեաւ հետ » և տասն քաղաք երբեմն (ստ. Արամաւ) Հայոց լեալ: Բ. կը ճանչնայ զՏիգրան արքայ արշակունի² մեծ թագաւոր Հայոց: Գ. անոր ժամանակ Պաղեստինէն՝ շատ Հրէից գերիք բերուած: Դ. Հիւրկա-

1 Դպր. Ե. գլ. ԼԲ:

2 Դպր. Դ. գլ. ԾԵ:

նոս քահանայապետն¹ ևս անոնց հետ
'ի միասին : Ե Սրտաշնի Բ զանոնք
յերուսաղեմացիս² յԱրտաշատ փոխա-
ղրելով : 2. Բուզանդ կը պատմէ Թա-
ղէոս և Բարթուղիմէոս³ առաքելոց քա-
րողութիւնն 'ի Հայս : Է. կը յիշէ Ուռ-
հայ քաղաքին⁴ յի՛նչ և նորոգիչ արշա-
կունի թագաւոր մ'ալ. (Արգար, ըստ
Խորենացւոյ) : Ը. և զՍանատրուկ թա-
գաւոր առաքելապալս յինող Մծուր
քաղաքի. որուն համար և անոր աղջը-
կանը Սանդկտոյ պատմութիւնը⁵ նոյն
խիկ Խորենացին⁶ կը վկայէ թէ իրմէ
յառաջ հայէ մը պատմուած էր : Թ.
Արտաւազդի Բ վրայ Խորենացւոյ պատ-
մածն, զոր նոյնպէս կը գտնենք առ
Եղնրկայ⁷ : Ժ. Խորենացւոյն հետ կը
ճանչնայ նաև Բուզանդ, զԽորով ար-
քայ հայր Տրդատայ⁸ : ԺԱ. և թէ Մա-
միկոնեանց ցեղն⁹ եկք են 'ի Ճենաց,
վասն զժտութեան իրիք եղելոյ անոնց
թագաւորող ցեղից¹ մէջ : ԺԲ. ամենա-
ճիշտ համաձայնութիւն կայ անուանց
և թուոց բազնաց և մեհենից² զորս
կը յիշեն Ագաթանգեղոս և Բուզանդ,
ընդ յիշատակելոցն 'ի Մ. Խորենացւոյ
և ընդ տեղեաց տաճարաց նոցա : Զանց
կընենք մի առ մի մնացած ուրիշ կե-
տերն, յորս նոյնպէս համաձայն կ'եր-
թան, օրինակ իմն, Լուսաւորչի, Տրդա-
տայ, Հռիփսիմեանց, մեծին Խոսրովու,
Արշակայ Բ, Հայկայ և անոր յաջորդաց,
և այլն, պատմութիւնքը, Ուստի Բուզան-
դայ և Խորենացւոյ մէջ եղած անհամա-
ձայնութիւնքը Մամիկոնեանց և Բա-
զրատունեաց ցեղերուն վերաբերեալ
այս ինչ կամ այն ինչ փոքր և մասնա-
կան կէտերու մէջ է, որոնց նկատմամբ
դեռ ոչ ոք կրնայ ապացուցանել թէ
որուն է ստոյգը :

Դարձեալ, Խորենացի ըստ վկայու-
թեան Լանկլուայի, մեծ գերխաղաց ևս
և արդի ուսումնական աշխարհի մէջ ա-
րևելեան մատենագրութեան նկատ-

մամբ, աւանդելով մեղի այն քաղաքա-
կան, ասորի, յոյն և աղգային աւան-
դական հեղինակութեանց հատակո-
տորը, որոնք յայտնուելով³ մեծ լոյս
ժագեցին բրիտանոնական թուականէն
յառաջ և անմիջապէս անկէ յետոյ ե-
կած դարուց մասնագրութեանը վը-
րայ : Ուրեմն այս կողմանէ, անիրաւ
տեղ կը կատարուին յարդի բանասիրաց
ոմանք անոր և անոր զործածած աղբե-
րացը վրայ :

Իսկ ընդհակառակն, եթէ բաղդա-
տենք զպատմագրութիւն Խորենացւոյ⁴
ընդ արտաքին կամ արևմտեան պատ-
մագրութեան, ('ի բաց առեալ Հայկա-
զանց պատմութեան վերաբերեալ մա-
սը, որուն ոչ ոք կարող է յարեմտեայց
հակասել, վասն զի կանուխ է ժամանա-
կաւ), շատ և շատ ժամանակագրական
և պատմական վիպաց անհամաձայնու-
թիւններ և հակասութիւնք կը նկո-
տուին Արշակունի և Պարթև թագաւո-
րաց մասին. նոյն իսկ Հայաստանի առ-
տին և Հռովմայեցւոց հետ ունեցած
դեսպանական յարաբերութեանց նը-
կատմամբ, և այս ակն յայտնի ապա-
ցուցութեամբ դահեկանաց :

Սակայն 'ի նկատի ունելով զհինգե-
րորդ դարը շրջապատող գաղտնիքն,
— իրմէ դարով յառաջ հայ մատենա-
գրաց ամենայն կարևոր կէտերու և դի-
պաց մէջ համաձայն ընթանալն, — Հա-
յոց դրացի ազգաց և արևմտեան կայս-
րութեան հանդամանքը —, և վերջապէս
Խորենացւոյ մասնաւոր⁵ բայց անշուշտ
իրաւացի նպատակն, որը հայ պատմա-
հօրս միայն քաջածանօթ էին, (զորս ա-
ռանձին ժամանակի և մասնաւոր քըն-
նութեան կը թողուք), անկէ վերջը
պէտք եղբ զլուխ ծռել հայ Հերոդոտո-
սին առջև, որուն համար կը վկայէ Կու-
ղյմիթ թէ : 6. Պարսկական ամեն բա-
նեցու մէջ շատ հմուտ է, և Պարթև թա-
գաւորաց վրայ անբաւ հմուտութիւն ու-

1 Անդ.

2 Գար. Ա. ԳԼ. ԺԹ. և ԽԹ.

3 Գար. Ե. ԳԼ. ԼԲ.

4 Բ. ԳԼ. ԼԳ.

5 Ա. Էջ 104-5.

6 Գար. Ա. ԳԼ. Գ.

7 Գար. Ե. ԳԼ. Դ.

նի» . և ենթադրական յննողատու-
թեան ասպարէշնիս ամբիսփեմը : Ար-
դարեւ պատմական խուզարկութեանց
ինչպիսի անդին գանձ չեն մատակարա-
րեր արդի քննադատից՝ այս հետեւեալ
պարսկական ուսանդութիւնքը , զորս
շատ մատենագիրք անդիտացան և խո-
րենացին հմուտ լինելով՝ անցողաբար

1 Սասի իւր Յիւսէֆի անունի Պարսի գրը-
քին մէջ (էջ 275) , յետ ըսելու թէ շատ առա-
պակէք կը պատմուին Արտաշէր թագաւորելոյն
վրայ , համեմատ Խորենացոյ պարսիկ գրութեմքէ
մը այս հետեւեալ ուսանդութիւնը մէջ կը բերէ
թէ Էրազմ մէջ հրեշտակ մը (Ստան) երեւաւ
Արտաշէրի և ըսաւ . « Մանուշանեմ՝ քեզի թէ
բաշխողն ամենայն պարգեւաց քեզի պիտի տայ
թէ թագաւորել Երկրիս մը և մարդկան մը բնա-
կին 'ի նա » :

2 Սիլվեստր Սասի մը և նոյն գրոց 282 էրեսին
մէջ , (քաղաքը անընչա՞տ 'ի պարսիկ մասնաւոր-
գրաց) , կ'ըսէ . « Պոռչակութիւն մ'եղաւ 'ի քաւ-
դեայց առ Արտաշէր թէ թագաւորութիւնը պի-
տի վերցուի և արուել Աշխնայոյ որդւոյն » յԱ-
շխնայ սերեալ մէկու մը : Թագաւորն այս գու-
շակութեան թէլազգութեամբ և չարաչար կո-
տորածով այն ցեղը ջնջելէն՝ քիչ յետոյ , որ մը
իւր կանանցին մէջ լսանիլ պէտք պայծառ և ա-
րեւուն պէտք գեղեցիկ կոյս մը տեսաւ . հարցուց
զայն և իմացաւ թէ կանանցի ազախիննէրէն մին
է . հարցուց թէ կոյս և ինքն եմէ ոչ . և երբ այն
այ այժմ ըսաւ . այնչափ հաճելի եղաւ թագաւո-
րին՝ որ մեկէն իրեն առաւ : Ազնիւր այնչափ ըն-
տանեցաւ թագաւորին : որ իմացուց թէ ինքը
Աշխնայոյ որդւոյն Աշխնի ցեղէն է : Հրամայեց
թագաւորը նախարարին որ 'ի բայ տանի զայն ,
ըսելով : Երբեք ծոյն ըստ սուր բնութեան :

Ահին իմացուց նախարարին թէ ինքն յոյ էր ,
նախարարն ցուցնելով զայն զայեկեաց՝ համալը-
ցաւ . ապա իւր զօրութիւնը արդիք մէջ դրցնելով
թագաւորին ներկայացուց զայն՝ ըսելով թէ ըստ
իւր հրամանին երկրիս ծոյն անոր բնակութիւն
առաւձ էր , և ինքեզմ որ իւր արքունի կնքաւը
կնքէ այն արկղը , որ անգին ֆապորգ մը կը տա-
նէր յինքեզմ , և իւր գանձուն մէջ պահէ :

Քիչ ժամանակէն այն աղջիկն արու գուռակ
մը ծնաւ , որ իւր կայտառութեամբն ամեն բա-
րիք կը խոտաւար , և անոր անունը Մարգարէ կամ
Մարգարէ դնել տուաւ , այսինքն և թագաւորի
որդի : Ինչոյ նախարարն առթի մը կը սպասէր ,
որ թագաւորին իմացնէ զայն : Մարգարէ ծնող-
նէն քանի մը տարի վերջը երբ անգամ մը խոր
մտածութեան մէջ տեսաւ զթագաւորը՝ պատ-
շառն հարցուց . ըսաւ թագաւորը . « Կը մտա-
ծեմ թէ աշխարհի մեծ մասը նուաճելով ժա-
ռանդ մը չուճի՞մ որ ինձմէ վերջը կտաւովրէ
զայն : Վրայ բերաւ նախարարը որ հոգ չունէ , և
թէ ինքը շորհալից և ուշիմ աղայ մը կը սնուցա-
ցանէր իւր մասնաւոր ինամոցը տակ : Թագաւո-
րին ուրախութիւն անպատմելի եղաւ և ուղեց

մէջ կը բերէ զանոնք , բսելով . « Քանզի
անտեղի է մեզ այժմ երկրորդել զառ-
ասպելսն յաղագս երազոյն՝ Փափա-
զոյ , և արդարադատութեան հրոյն մա-
նուածոյ որ 'ի Սասանոյ , և պատուամ
վհօտիւն , և զլուսնաւն , և արտարմու-
ղացն » յառաջնաստորումն որ են քաւ-
դեայք , և որ ինչ զինի այսորիկ և պոսնը :

որ բացատրէ այն գաղանկը : Իսկ նախարարն ը-
սաւ , որ առանց այն արկղը , զոր թագաւորն իւր
մատանեաւը ինչ , հին բերելով՝ չէ կրնար մեկ-
նել : Իսնայուն պէտք զարմացաւ ֆաջ թագաւ-
որն : Այն ժամանակ մեկնեց նախարարը թէ
ինչպէս իւր հրամանաց համաձայն զայն երկրիս
ծոցը բնակեցուցէր էր , բայց այնպէս որ թա-
գաւորական ընդին անդին սերմն կարենայ պա-
հուիլ , և թէ ինչպէս զրկեցի զիս , ըսաւ : այն
բնական տուրքէն և գրի իմ զօրութիւնս արքու-
նի գանձին մէջ , որպէս զի յետոյ ամեն բամբա-
սանքէ ազատ մնամ : Վասն զի այն վայրկեան յո-
րում այս կինս սենեկին մէջ կը ծնանէր՝ քաւ-
դեայք կը դիտէին իմ հրամանացս թագաւորի
որդւոյն արկղաբը և թէ ծանոցանէին ինձի թէ
երկրից կը յայտնուէ թէ այս աղան որ մը արգար
և միահեծան տէր պիտի ըլլայ և արգարոյն Քա-
յումարայ գահը պիտի բազմի , անոր համար ա-
մենայն փոյլ թողայ անոր անուցման :

Թագաւորն հրամայեց որ 1000 ուրիշ ման-
կանց հետ Մարգարէ իրեն բերաւ իւրաքան-
չելիքն զնաակախաղութեան տեղ մը տուաւ և
գնառակ մը նետել անոնցմէ մեկուն մէջ՝ որ թա-
գաւորի բնակարանին մօտ էր . խաղի ժամանակ
գնառակը արքունի սրահին մէջ ինչպէս , ուր կեցած
էր նա . ոչ որ համարձակեցաւ աննոցմէ այն սր-
հին մէջ ոտը կոխել : Իսկ Մարգարէ՝ աներկիւրով
տաւ հօն և գնառակ վերցուց : Այն ժամանակ
բողբոլկն համոզուեցաւ Արտաշէր՝ իշխանիկին
այս բնական գործէն թէ ստուգիւ նա արքայա-
կան ընդին շտաւելի մ'է , և թագաւորեցոյց իւր
տեղը :

Այս աւանդութեանս աւարին մասը կը դրո-
նուի նաև Աթաթանգղեզիս յուսարեն թարգ-
մանութեան մէջ :

Որչափ որ անգին են Սասանայ մեկնութիւնքն
և գեղեցիկ կը միաբանին Խորենացոյ աւանդա-
ծին հետ , սակայն մասամբ մի միայն կը պարզեն
այն զրուցած գաղանկը :

Ուստի այս Հերոդոտոսին բազմազանձ հրմ-
տութեանն և անոր աւանդած պարսկական զրու-
ցաց ամբողջական մեկնութիւնը տարւա համար ,
պէտք է անգրադոյնս թեւակոխել քան զժամա-
նակ և զմատուկ պատմութիւն Արտաշէրի . և եւ-
լել Մարգարէնց կամ Զրադաշտի վարդապե-
տութեան բարձրագոյն կէտը , որուն վերահաս-
տատութեանը համար Սասանական հարստու-
թիւնը կործանեց զԱրշակունի հարստութիւնը
և անոր տեղը բանեց :

Յերաւել , Խորենացոց Արտաշէրի և Սասանայ
մասին աւանդած զրուցաց վերին մասերը զրա-

կական խորհուրդն Արտաշիր հանդերձ սպանութեամբ, և անմիա հանճարաբանութիւն մոզին զստեր վասն նոխադին, և որ ինչ այլն ամենայն: Նոյն այլն զիեցումն մանկան ընդ հովանեաւ արծուոյն, և դու չակումն ագաւաւուն, և գերապանծին պահպանութիւն առիւծուն հանդերձ արքանեկութեամբ գայլուն, միայնամարտութեանն առաքինութիւն »: (Խոր. Բ. գլ. 3, էջ 308 և կամ 319):

Ուրիշ մասնաւոր կէտ մ'ալ, որ կը նուազեցընէ խորենացւոյ պատմութեան յարգը, և ՚ի բազում ուրեք հակառակ կ'ընթեանայ արտաքին պատմագրութեան Հովմայեցւոյ՝ անոր գործածած ժամանակագրութիւնն է: Վասն զի ջանացեր է նա շատ կէտերով Ս. Գրոց ժամանակագրութիւնն և վկայութիւնքը՝ միաբանել քաղղէացի, յոյն և տոհմային աղբերաց հետ. և այս է, ըստ մեր կարծեաց, մեծագոյն պատճառ անոր շփոթման և անհամաձայնութեանը: Վասն զի ինչպէս ամենայն շարժումն, ամենայն յեղափոխութիւնք և գործք ժամանակի մէջ կ'իրագործուին, այսպէս ալ ժամանակի հետ սերտ կապակցութիւն ունին և անկէ կը չափուին, ուստի ժամանակագրական կարգն ալ դարտելով պէս՝ այն գործերն ալ կը փոխուին և ուրիշ անձի և կամ աշխարհի

գաշտական տմենալին վարդապետութեան իսկական կէտերը կ'անխուսէն, այսինքն է նախահարց մեղանքն, երկու սկզբանց ազդեցութիւնն, և մարդկութեան երջանիկ և անբախտիկ վիճակներն, զորս արեւելքի Արիւս կամ Երանական Ժողովուրդք՝ իրենց անշնչաասակ ժամանակի առասպելաբանութեանց մէջ այլպէս կը պատմեն. Հիմայ (Hima) և ըստ Հնդկաց Եմայ (Jama) էր երկնածին, հայր նախաջնեղեղեան և յետ-ջնեղեղեան մարդկութեան և եգեմական թագաւոր Իրանոց: Իսկ Բունդհեհէ իբրեւ գրութիւն ինչ կը գործածէ զայս:

Հիմայ կամ Եմայ, որ իբրեանա-Վէճոյի մէջ երջանիկ էր. Արիմանէն խաբուելով սեհադաւ և 30 օր կերակուելէն յետոյ՝ որսի ելաւ իւր կնիք հետ, և իրենց ձեռնիկ այժ մը շանդիպեցաւ, որուն խնդրէինք և իրենց մեծ հաճոյք կը պատճառէր:

Սակայն երկրորդ անգամ խաբուելով դիւնէն՝ կորուսին իրենց 100 առանձնաշնորհութիւնքը. Բայց 40 օրէ և 40 դիւերաց յետոյ՝ սղիթակ և գէր

կը փոխանցին: Ասոր օրինակ կրնոյ ըլլալ Եւտիքէս Աղեքսանդրիոյ պատրիարգին գործածած ժամանակագրութիւն, որով իւր եկեղեցական պատմութեան մէջ պատրիարգաց անուանքը տակն ու վրայ ըրած է բոլորովին: Ապա թէ ոչ՝ դարձեալ կը կրկնենք և երեքինքն, թէ Մ. Խորենացի միշտ իւր ժամանակի գաղափարներէն վեր և անոր նախապաշարմունքէն ազատ և եզական հանճար մ'եղած է:

Սակայն թողունք այս բարձր հանճարին մեր պարտապատշաճ դրուատիքն և հակառակորդաց պարստան, և անոր երկակիւրութեան և աղբերաց վերոյ քննադատութիւնն իս շարունակենք:

Բոլոր վերոյիշեալ խորենացւոյ պատմութեան աղբիւրներն՝ պէսք եւք երկու յատուկ ժամանակի և դպրոցական դասակարգութեան վերածել, այսինքն է նախ քան զՔրիստոս և յետՔրիստոսի. կամ լաւ ևս ըսելով, հեթանոսական և քրիստոնէական դպրոցի մատենագրութեան: Առաջին դասակարգութեանը կամ՝ զպրութեան կը վերաբերին անտարակոյս, ըստ կարծեաց արդի քալ արեւելագիտաց, Գաղլլմէրի, Շփոսնի, Գեօնի, Լարզոֆի, և Ռենանի, գէթ Պերոզի, Ապտղորոսի, Մաննեթնի, Արիւգենոսի,

ուրաւ ինքեցաւ իրենց, որուն յաւանք իբեցին: Յետոյ Թեւոգրութեանը երկնաւոր Մագադոյ (Jazats) կամ Ելիսանդրոս կրակ յառաջ բերին զանոր կամ խանդ ըստած ծառէն, փայտի կտորէ մը հետ շփելով: Նախ խանդի ծառն և ապա արձանէին և յարկէն այրելով՝ խորովէին այն ոչ իսարը և երեք մաս բաժնեցին... Եւս փն ևս ինքեք ըլլալով՝ անոր յարկէն ծածկեցան: Յետոյ որսի ելած ժամանակ՝ վայրի կենդանեաց յարկէն զգնալէն լինէին: (Տես Լորդման, Պամ. Հին ազգաց, Թ. ապգ. հտ. Ա. էջ 3 և 32):

Ստուգել, այս առանգութիւնս գրեթէ յագեցուցիչ մեկնութիւն մի է Խորենացեաց ականգած զբուցացը, ըստ մեր կարծեաց, եթէ համարենք որ Մ. Խորենացի հօս Սասանայ, կամ լաւ ևս ըսելով, Արագայտի անմիտ վարդապետութիւնը կ'ուզէ մէջ բերել և իրօք ալ այնպէս է, որովհետեւ սասանական բռնակալութեան և անոր միջոյն արբանեկաց վրայ խոսեղէն յետոյ՝ կը յաւելու, « անտեղի մեղ երկրորդէն դուռապնէն յաղագս երազըն Փափագոյ, և այլն »...

Ռազմավիճակն Ալեքսանդրի, Կեփաղիոնի և մնասաւր Մար Աբաս Կատինայի, հա-
տուածներն, որոնք համեմատութեամբ
մերձաւոր ժամանակի երկասիրութեց
հետ խառնուած մեզի կրնե՞րկայանան,
և կը կազմեն զհին արամէական մասե-
նագրութիւնն ֆաղդէացւոց և Աուրուց-
Մասամբ ըսի ևս Մար Աբասայ, և յի-
րաւի ոչ միայն նկատմամբ անոնց՝ որոնք
իրօք կ'ընդունին այն անձի գոյութիւնն
սու. վաղարշակաւ, այլ նաև այն բանա-
սիրաց՝ որոնք կը մերժեն զայն և կամ՝
քրիստոնէական թուականին Գ. և Դ.
դարու մատենագիր մը կը համարին:
Վասն զի վերը յիշած արեւելագէտնե-
րէն ոմանք, և մասնաւոր ՚իբրայով Ռե-
նան և Լաւիժերի, այս երկու, այսինքն
է, քաղդէական և ասորի մատենագրու-
թեանց մէջ դարական խարոց մը կը
տեսնէին, յորում հետք չէր երևնար
միջնադարեան մատենագրական մշակու-
թեան մը, որ պիտի ըլլար ըստ ինքեան,
ընդ մէջ Պերոզի՝ որ է առաջնորդ հե-
թանոս մատենագրութեան ֆաղդէա-
ցւոց, և Բարդածանի՝ որ է պարագլուխ
ասորի գպրութեան կամ՝ քրիստոնէա-
կան դպրոցին Եղեսիոյ: Ուստի Պ. Լան-
կուայի հետ կրնանք ընդունիլ թէ այս
խտրոցն և մատենագրաց պակասը լեցը-
նողք՝ եղան Հայոց, մասնաւոր կերպով
մարիքասեան կամ՝ Մ. Խորենացւոյ եր-
կասիրութիւնքը: Սակայն դեռ խորը
անցնինք անոնց քննադատութեանը:

Արդ մինչև հիմայ եթէ Հռովմայեցւոց
և Յունաց և եթէ այժմեան երեւելի ա-
րեւելագիտաց, Պերոզի, Աղեքսանդրի
Ռազմավիճակի, Աբիւդենոսի, Կեփաղիոնի
և Մար Իբասի պէս անձանցով ժամա-
նակի հեղինակաց վրայ եղած զանա-
զան կարծիքը և տարաձայնութիւններն
ընդհանրացնենք, այս երեք պատմական
ճշմարտութիւններն մեզ ՚ի յայտ կու
գան. Ա. ամենահին ժամանակի քաղ-
դէական մատենք կամ դիւանագիրք.
Բ. անոնց վրայէն եղած յունարէն թարգ-
մանութիւնք, որով և հելլեն թարգման-
չաց պարք. Գ. ասորեբէն լեզուի՝ բայց
տարբեր գպրոցի հեղինակութիւնք:

Անշուշտ իսկզբան այս մեր ըրած ան-
դրագործութիւնքն պարզապէս ենթա-
դրութիւն պիտի երևին ընթերցողաց
ոմանց, սակայն հանդերձ այսու՝ իրն
յինքեան շատ ճշմարտանման է, և պատ-
մական հիմանէ ալ ոչ բոլորովին զուրկ:

Իրաւյցնէ որոնք որ մանրամասն քնն-
նած են զխորենացին և անոր աստ անդ
ըրած երբեմն կտրուկ լակոնութեանու-
թեանցը և խրթին բացատրութեանցը
քաջածանօթ են, կրնան ըսածնուս հա-
մազուիւ վասն զի Խորենացի, թողունք
իւր երկասիրութեան մէջ արդէն զա-
նազան տեղ այդ երեք կարևոր կէտե-
րուն վրայ առանձնաբար, իբրև ասորի
և յոյն գպրոցներու մէջ հմտացած մա-
տենագիր՝ տեղեկութիւն տալը, անուշ-
ղակի ևս նոյնը իւր Ա. Գրոց թէ գլխուն
մէջ՝ «Մար Աբաս Ասորայն ձեռքով,
քաղդէական մատենի գիշտով և հեղ-
իէն թարգմանութեամբ», մեր կարծիքը
կը հաստատէ:

Սակայն Խորենացին չէ միայն. նոյնը
կ'ըսեն Եւսեբիոս, Յովսեպոս և նոյն իսկ
անոնց երկասիրութեանց մէջ գտնուող
բոլոր հասուկտիր հասուածոց հանգա-
մանքն, կ'ուզեն՝ ըսել, պերողեան Սի-
րիլայի, Ասորդոցորոսի, Աբիւդենոսի,
Աղեքսանդրի Ռազմավիճակի, Կեփաղիոնի
և մարիքասեան կարծուած հեղինակին:
Եւ ասոնց ամենուն գլուխ և ներկայա-
ցուցիչ եղած ըլլալ մեծանունն և այն
չափ հռչակեալն ՚ի հնոց Պերոզ կամ
Բերոսոս, ըստ քաղդէարէն հնչման:

Ի՞նչ կերպով արդեօք, եթէ կը նե-
րուի, կը համարձակիմ՝ ըսել, թէ հին
ժամանակի քաղդէարէն գիւանագրոց՝
հելլեն թարգմանչաց և թարգմանու-
թեանց ձեռքով, հրամանաւ՝ յառաջա-
դիմութեան պաշտպան և կամ յունա-
կան փառաւորութեան՝ փառախնդիր
Մեկենասի մը, այսինքն Մեծին Աղեք-
սանդրի, թէպէտ և միւս կողմանէ բնաւ
չեմ կրնար ժխտել թէ նոյն անձինքն,
Պերոզէն սկսեալ՝ քաղդէարէն լեզուի
քաշավարժ գտնուելով, նոյն լեզուով
ևս երկասիրութիւններ ըրած ըլլան:

Իսկ գալով մեր ըրած այս ենթադրու-

Թեան ժամանակին և դիպաց կտտար-
մանը, ամենահաւանական կ'երևի թէ
երբ Ասորեստանեայց' (Նինոէի և Բա-
բելոնի) և Մարաց թագաւորութիւննե-
րը Արեաց տակ խնայով տկարացան,
և Մակեդոնական պետութիւնն Սղեք-
սանդրի աշխարհակալութեամբն այն
երկիրներուն և բոլոր ազգաց Ասիոյ տե-
րեց, այն ժամանակամիջոցին եղած
պիտի ըլլան, կամ դեռ ճշտագոյն խօ-
սելով, Սիլեկացւոց թագաւորութեան
ստեղծ' առ Անտիոքոսիւ, վասն զի այն
ժամանակի ասիական ժողովրդոց թէ
քաղաքական և թէ մատենագրական
պատմութիւնն և պարագայք անգամ
այնպէս կը հաւաստեն:

Եւ իրաւընէ այս հանգամանքներն
որք աւելի կը բացայայտեն թէ իրօք Ա-
ղեքսանդրի ժամանակ հելլէն թարգ-
մանչաց զաս մը կար, որոնք արեւելեան
կամ քաղղէարէն գիւտնագիրքը 'ի յոյն
լեզու կը յեղուին, են, Ա. անոնց ա-
նուանքն, որք բաց 'ի Պերոզէն, որուն
համար արդէն ըսինք թէ իմաստուն և
հելլէն լեզուի հմուտ քաղղէացի մ'է,
մնացածները յունական հնչումն ունին
քան քաղղէական: Բ. հին և նոր պատ-
մագրաց' անոնց ինչ ժամանակի և ինչ
ազգէ ըլլալով վրայ ունեցած տարաձայ-
նութիւնն դուրս' նոյն իսկ այն հեղի-
նակաց երկասիրութիւնք, որոնք աւե-
լի յոյն լեզուով մեզի ծանօթ են: Գ.
Հուովմայեցիք և Յոյնք' իրեւ հին քաղ-
ղէարէն մատենագրութեան ներկայա-
ցուցիչներ կը համարին զանոնք և ոչ
թէ բուն քաղղէացիս: Նոյն իսկ բազ-
մահմուտն իրենան հաւանական կը հա-
մարի հնոց այս կարծիքը, սակայն ա-
նոնց հնութեանը վրայ միայն կը կաս-
կածի:

Ամենայն դը կրնայ կասկածիլ, բայց
կասկածը պարզապէս մտաց տարտամ
վիճակ մ'է, և հաստատուն փաստի
սեղ չի գործի: Սակայն Յովսեփոսի,
Եւսեբիոսի, Սինկլլոսի և Մ'. Խորե-
նացւոյ վկայութեանը նայելով, իրն ինք-
նին ճշմարիտ կ'երևի, թէ կամ Եոյն էին
աղղաւ և կամ հելլենացած քաղղէա-

ցիք և Ասորիք: Ուստի պէտք է եզրա-
կացնել թէ, ոչ իշ կերպով չեղան ներ-
կայացոցիլ քաղղէարէն մատենա-
գրութեան կամ պատմութեան, երբ ոչ
հելլէն քարգամուտքեամբ ճանօթացը-
նելով այն ազգաց հնաշուոյ դիւա-
նագիրքը:

Սակայն որպէս զի միայն ենթադրու-
թիւն չմնայ ըսածնիս, տեսնելք հա-
մառօտ կերպով անոնց հատուածներն
և անոնց բնագործմը, որք կը գտնուին
'ի ժամանակագրութեան Եւսեբեայ, առ
Յովսեփոսի և առ Մ'. Խորենացւոյ և 'ի
Հաւարման Միւլլէրի:

Արդարեւ ամենքն ալ իրենց պատմու-
թիւնը նախաջրհեղեղեան թագաւոր-
ներէ և վիպասանական դէպքով մը կը
սկսին. դրեթէ մի և նոյն գտնով նկարա-
դրելով, մի և նոյն անուանց յիշատակու-
թեամբ, մինչև մի և նոյն բառերով և
Սոսի և Շարի և Ների շրջաններով՝
յայտնի կերպով կ'ապաստանեն թէ
մի և նոյն դպրոցի մատենագիրք էին. մի
և նոյն ժամանակի գաղափարներով
սնած, մի և նոյն դիպաց վրայ գրուած
քաղղէական հնաւանդ գիւտնագրքէ
թարգմանած և կամ թարգմանաբար
յօրինել էին իրենց երկասիրութիւնքը:

Լսենք Ապոլոդորոսի, թէ քաղղէա-
ցիք ինչպէս կը ժամանակագրեն նախա-
ջրհեղեղեան թագաւորաց վրայ, ուս-
կից կը քաղէ Բազմավէպն Սլեքսանդր-
ա Ապոլոդորոս առն, նախ կացեալ թա-
գաւոր զԱղովրոս, որ 'ի Բաբելոնէ իսկ
էր քաղղէացի, թագաւորեալ նմա
շարս Ժ. բաժանեալ զշար մի 'ի թիւ
երից հազարաց և վեց հարիւրոց ամաց,
զրեալ 'ի նորին վերայ 'ի ներս իմն և սօ-
սըս: Ներ մի 'ի ներիցն' է վեց հարիւր
ամ, և սօս մի 'ի սօսիցն է ամ: Ի վախ-
ճանեւ Աղովրոս թագաւորեաց որդի նո-
րա Ալպարոս շարս Գ. և յիս Աղա-
պարայ Ալլեղովն... շարս ԺԳ. և յես
Ալլեղովնայ' Ամմենովն... թագա-
ւորեալ շարս ԺԲ. 'ի նորա սուրս ե-
րեւալ զազան ինչ զոր կոչին Իգով-
տիովն 'ի կարմիր ծովէ, որպէս մարդկան
և ձկան կերպարանք էին: Եւ ըստ նմա-

նէ Ամեդադարայ թագաւորել շարս ԸԺ: Էւ յետոյ Դաւոնեայ լինել հովուի թագաւորեալ շարս Ժ: Էւ ապա իշխել եդովրանքա շարս ԺԼ: ապա իշխել Ռտիարտեայ շարս Ը: և 'ի վախճանել Ռտիարտեայ՝ որդւոյ նորա Գաիսութեայ թագաւորեալ շարս ԸԺ:

Տեսնենք հիմայ Պերոգեան հատուածը, զոր դարձեալ Բազմավէպն Սղեքսանդրի հաւաքելով կ'ըսէ:

« Բերոսոս բայ, ասէ յառաջնումն Բաբելոնական մատենին, լինել նմա 'ի տիւ Սղեքսանդրի փիլիպպեայ, և գրիւզբազմաց մատենան որ 'ի Բաբելոնի՝ բազում՝ զգուշութեամբ պահէին յերկիրիւր և 'ի հնգատասան բիւրուց ամաց հետէ: Էւ յառաջնումն ամին յայտնել 'ի Կարմիր ծովէ անդէն իսկ 'ի մէջ սահմանաց Բաբելոնի՝ ահագին ինչ գաղանի որոյ անուն կոչիցի Ովան, որպէս Ապողոդորոս պատմէ, ամենայն մարմին ձկան էր և ընդ գլխով ձկան այլ գլուխ առանձին պատշաճեալ իբրև զմարդոյ: Իսկ յերկրորդումն՝ մի և նոյն ժ թագաւորաց անուանքը կը դնէ հանդերձ վերջ յիշած Սոսերով և Շարբերով, զորս աւելորդ կը համարինք կրկնել:

Լսենք այժմ Աբիւղենոսի. « Թագաւորեալ նախ աշխարհին զՍղովորայ առնէ, զի զնա ժողովրդեան ամենախնամն Աստուած եցոյց հովիւ, որ թագաւորեաց շարս Ժ: և շարն է վ և Ռ ամ, և Ներն՝ Ո: և սոսն՝ Կ: Յետ նորա տիրեաց Ապաղաւրոս, յետ որոյ Ազնեզմիւ, յետ որոյ Ամեդադաւրոս, ապա Դաւոնոս հովիւ: Էւ առ Եգէովրէսքաւ՝ որ յետ նորայն թագաւորեայ՝ Անողափոսն, յետ որոյ այլք տիրեցին և Գաիսութոս »:

Իսկ Կեփաղիոն այսպէս կը ս'սի. « Սղեքսանիմ՝ դրել յորոց և այլք յիշատակեցին: Զառաջինն Ասիացւոց թագաւորեցին Ասորեստանեայք »: Էւ յետ ակնարկութեամբ յիշելոյ այն նախաջրհեղեղեան թագաւորները՝ կ'անցնի շուտով Նինոսի և Շամիրամայ պատմութեանը: Ակնարկութեամբ ըսի, թէ պէտ և իրօք չկան այն անուանքն Եւսե-

րիոսի Գրոնիկոնին Կեփաղիոնէն առած հատուածոց մէջ, սակայն Կեփաղիոնի այս խօսքերես յայտնապէս կը տեսնուի թէ յիշած է զանոնք, վասն զի Նինոսին անցնելու ժամանակ՝ կ'ըսէ. « Յորոց էր Նիկոս քելեւսն, այսինքն նախապատմական թագաւորաց »:

Հիմայ լսենք անոնց ջրհեղեղին պատմութեան նկատմամբ ունեցած համաձայնութիւնը. Բազմավէպը՝ Բերոսոսին հետ այսպէս կը սկսի. « Ի վախճանիւ Ռտիարտեայ՝ նորին որդւոյ Գաիսութեայ (Նոյի) թագաւորել շարս ԺԼ: և առ նուա լինել մեծի ջրհեղեղին: Կրօն նմա 'ի քուն յայտնել զոր հայրն անուանեն Արամազդայ, և այլք՝ ժամանակ 'ի հինգերորդում՝ գետիոս ամեհոն՝ մարդկան 'ի ջրհեղեղէն սատակել. հրաման տալ զամենայն գառալիկն և զմիջինս և զվերջինս մատենից փորել և դնել Արեգ քաղաքին Սիպարացւոց », և այլն:

Աբիւղենոս. « Յետ որոյ (Ռտարտեայ) այլք տիրեցին և Գաիսութոս՝ որում կռնոս (ժամանակ) յառաջագոյն գուշակեաց լինել յաճախութիւն անձրևաց (ջրհեղիւ) 'ի հինգերորդումն գետիոս ամոց. հրաման տալ զմատենան ամենայն Արեգ քաղաքի Սիպարացւոց թագուցանել »:

Արտարսիկաշինոքեւսն վրայ. — Սիբիլա՝ այսպէս կը պատմէ, Բերոսոսէն և Բազմավիպէն քաղելով. « Միաբանեալ ամենայն մարդիկ գրարձաբերձ աշտարակն շինէին, զի յերկինս ելանիցեն, և ամենազօրն Աստուծոյ հողմ շնչեալ զաշտարակն կործանէր և իւրօքանչիւր ումեք զիւր լեզու բայնէր, վասն որոյ անուն քաղաքին Բաբելոն կոչէր »:

Իսկ Աբիւղենոս. « Սկսանէին, կ'ըսէ, գրարձարբերձ բուրգն կանգնել, որ այժմ Բաբելոն կոչի. և իբրև մօտ յերկինս հասուցանէին դիցն, այնուհետև հողմոց՝ դից օգնական լեալ մղէին և յերկիր կործանէին զմեքենաւոր գործ անարեացն, և յատակն կործանեալ Բաբելոն անուանէր, որ ցայն վայր միաշուրթն համալեզուք էին: ... Խառնա-

խօս խրդուրտիւն 'ի միաբանեալն եկեալ մօտնէր: Եւ յետ այնորիկ կրօնքն և Տիտան մարտ պատերազմի ընդ միմեանս բախէին ։

Այսպէս նաև Ասորեստանայց և Գաղղէացւոց և Մարաց թագաւորնեւուն վրայ ամենիքն ալ միաձայն և գրեթէ, ինչպէս անասն ընթերցողք, բառ առ բառ կը պատմեն ։

Ուրեմն սակէ քնչ կը հետեի: Եզրակացութիւնն ամենայայտնի է, եթէ ըստուգիւ չենք ուզեր այնչափ պատմականց վկայութեանց դէմ՝ կռուիլ, զոր երթալով աւելի ևս կը հաստատեն մեր օրերը, Լէյարտի, Գեորգ Շմիթի Քաղղեական գիրք «Նեղոց» նախ քան ըզՄովսէս խորագրով, և այլոց հնագիտաց Նինուէէն հանած Ասորա-Բաբելական արձանագրութիւնքն, որոնք այն վերոյիշեալ հին մատենագրաց մասնաւորապէս Պերոյի՝ Ասորեստանեաց և Գաղղէացւոց վրայ աւանդածներուն համաձայն կը պատմեն, և բաց 'ի սեպանքն են՝ նկարուած իսկ կը դտնան այն առնակերպ և թեփամորթ գազանը, որ Ասորեստանայց հզօր թագաւորութիւնը կը ներկայացընէ և որ Ասորեստանայց Նիմրուտի պալատին խորաքանդակ մ'էր և այժմ Բրիտանական թանգարանի մէջ կը կենայ 'ի հաստատութիւն Բերոսոսի աւանդածին ։

Եթէ չենք ուզեր այն հեղինակաց աւանդածին ստուգութեան հետ՝ նոյնպէս այս վերջի ժամանակաց սեպանքն արձանագրութեանց վկայութիւնն ալ զրականապէս 'ի հիմանք մերժել, որ ոչ է զորձ ճշմարիտ բանադատութեան, այլ անձնահաճ իմն նորասիրութեան, պէտք ենք, դարձեալ կը կրկնեմ, հաստատել թէ այն հատուածներն ամենքն ալ զորձ են ամենահին ժամանակի քաղղէական գիւտագրոց վրայէն եղած ընդարձակ բազմապատում և հելլէն թարգմանութեան. և թէ այդ բազմապէս Աղեքսանդրի կողուած հաւաքա-

բանութիւնը՝ որ զրեթէ բոլոր մնացած հեղինակաց հատուածներն իւր մէջ բովանդակելով մեզի կը ներկայանայ, անշուշտ այն անուամբ առանձին անձի մը գործ պիտի եղա՞յ լրջայ միայն, այլ Ապոլոնորոսի, Պերոգի, Աբիդոքնոսի, Մեգասթենէսի, Կեփաղիոնի, Սիբիլայից և այլոց հելլէն քարտմանչաց անուամբ մեզի հասած հատուածները, կամ վերը յիշա՞յ քաղղեստէն մատենի և կամ անոնց ընդհանուր դիւանագրոց յունարէն քարտմանչքեանց հաւաքմունք, զոր ընհայեցին յաւուն Աղեքսանդրի, իբրև յունական գիտութեանց զարգացոցի: Մեկեւաւսի մը, կամ առ կենդանութեամբ նորին իսկ Մեծին Աղեքսանդրի, (ինչպէս կ'ընթեռնունք 'ի Քրոնիկոնն Եւսեբեայ, լինել նմա 'ի տիս Աղեքսանդրի փլիպպեայ) . և կամ յետոյ առ Անտիոքոսիւ, ինչպէս կը հաստատէ նաև բազմահմուտն Կուզշմիթ, Պերոգի համար ։

Եւ ստուգիւ մեր այս ենթադրութիւն պատմաբանօրէն իսկ կը հաստատեը խորենացւոյ (Ա գրոց, գլ. Բ, էջ 17) այս խօսքերս. « Այլ և ռազում արքանուանիք և իմաստութեան պարապեալք 'ի Յունաց աշխարհէն՝ հոգացան ոչ միայն զգիր գիւտնաց այլոց ազգաց թագաւորաց և զմահեանց յեղու 'ի յոյն բան, որպէս գտանեմք զայն, որ և զԲիւռոս ոմն յայս յորդորեաց այդ քաղղէացի, և վարժ ամենայն իմաստութեամբ, այլ և զմեծամեծս և զգարմանալոյ արժանաւորս յարաւաստից, և ուրիշ ուրիշ գրտեալ աշխատութեամբ հուսաքեալ՝ փոխեցին 'ի յոյն լեզու. որպէս զայդ՝ առ քէ, և զգայ և զթոյ՝ առ փիւր, և զկենն առ եչ, և զգայ՝ առ սէ. և ժողովեալ զայսոսիկ արանց, զորոց և միք զանուանըս գիտեմք հուսատի՝ նուիրեցին 'ի փոռս Հելլենացոց աշխարհին ։ Արդարեւ Նինուէի գրատան նոր բարեպատեհ գիտն զոր ըրին վերջերս Լէյարտ և Գ. Շմիթ, այսինքն այս վերոյիշեալ

¹ Այսինքն է, զաստեղագրութիւնն առ Քաղղէացիս. զերկրապիտութիւնն առ Եգիպտոս:

տացիս. զթուաբանութիւնն առ Փիւնիկեցիս. և զերաժառութիւնն առ Թրակացիս:

տմենայն գիտութեանց աղիւսաթեր-
թերն, զորս յետոյ պիտի տեսնեմք,
անժխտելի կերպով կ'ապացուցանեն
այնպիսի թարգմանութեանց ստուգու-
թիւնն և Մ. Խորենացւոյ ստուգապա-
տում վկայութիւնը կը հաստատեն:

Իսկ որովհետեւ կարծեցեալ Մարի-
բասեան պատմութեան հեղինակն իսկ,
ըստ վկայութեան Մ. Խորենացւոյ, իւր
երկասիրութեան հիմունքն ևս այն մա-
տենէն հաներ է¹. «Եւ խուզեալ զա-
մենայն մատեանսն՝ գտանէ մատեան
մի հնչլէն գրով, յորոյ վերայ էր վերնա-
գիրն այսպիսի. Այս մատեան հրամա-
նաւ Աղեքսանդրի ՚ի Քաղղէսացւոց բար-
բառոյ փոխեալ ՚ի յայնն, որ ունի գրուն
հնոց և զնախնեանց բանս » . ուրեմն...

Մարիբասեան պատմագրութեանը՝
նախաջինգելեան թագաւորաց, ջրհե-
ղեղի, աշտարակաշինութեան և Քաղ-
ղէսացւոյ թագաւորաց ազգաբանու-
թեան վրայ ըրած պատմութիւնը ևս՝
համաձայն կ'ընթանան այն հին մատե-
նադրաց աւանդածին հետ, բայց ՚ի
կարծեցեալ տարաձայնութենէ մը, այս-
ինքն է Հայկայ ազգաբանութիւնը, զոր
Խորենացին միայն մէջ կը բերէ Մար-
Աբասայ և Արիւղենոսի կողմանէ, իսկ
Եւսեբիոս, Յովսէպոս, և ոչ իսկ ներկայ
վիճակի մէջ անոնց քով գտնուած ու-
րիշ քաղղէացի հատուածոց հեղինակ-
ները կը յիշեն:

Պէտք չէ զարմանալ այս բանիս, թէ
Եւսեբիոս Հայաստանի թագաւորներ
չի յիշեր, այլ անկէ շատ աւելի կարևոր
կէտն անդամ, այսինքն է Հայաստանի
դարձն ՚ի քրիստոնէութիւն, զոր պէտք
չէր բնաւ անյիշատակ թողուլ, բոլորս-
վին լուծ է: Ուրեմն ուրիշ պատճառ-
ներ պէտք են որոնել այնպիսի լռու-
թեան մը, որք եթէ բոլորովին յայտնի
չեն՝ նոյնպէս ալ կրնանք ըսել թէ ծա-
ծուկ չեն:

¹ Լընորման (Պատմ. Հին. ազգաց Թ. տպգ. հտ. Ա. էջ 47.) կ'ընդունի թէ Մարիբաս Կա-
սեան իւր պատմութիւնը քաղղէական մատե-
նագիրներէ հանած է և Հայաստանի աւանդու-
թիւններէն, որ այն ազգաց երկու գիւցաղուն.

Սակայն առանց հանդոյցը խզելու
կամ ուղղակի պատմութեան հակառա-
կելու՝ գուցէ ըսուի, թէ Հայոց պատ-
մութեան կամ անոր զիստուր աղբեր
հեղինակն՝ այն մասը կանխաւ դուրս
հանած ըլլալով հրամանաւ Արշակոյ,
այն պատճառաւ անկէ վերջն եկող մա-
տենագիրը այն մասին յիշատակութիւն
մը չեն ըներ: Սակայն մենք աւելի հա-
ւանական կը համարինք թէ ըրած են
բայց այժմ անյայտացած են ՚ի միջոյ
այն անուանքն՝ առանց մեզի հասնելու.
ինչպէս օրինակ իմն, Յուլիոս Կեսարէն
վերջը եկող կայսերաց և հիւպատոսաց
անուանքն՝ մեր ձեռքը հասած չեն, զորս
Եւսեբիոսի (Գրոն. էջ 397) նախընթաց
այս բառերէն զիստուածով կ'իմանանք
թէ յիշած է. ուր կ'ըսէ, « Պատշաճ է
՚ի սոյնս յարել և գնոսալ, որք Յուլիայ
կայսերէ իւր մակալք Հռովմայեցոց
կացին »:

Ուստի հիմոյ բաւական կը համա-
րինք Հայկաղեան թագաւորաց նկատ-
մամբ՝ ընթերցողաց ուշադրութիւնն այս
նշանաւոր կէտիս վրայ դարձնել, որ
վերջէն Մարիբասեան պատմութեան
հեղինակին յալթանակը կարէ կանդ-
նել, եթէ արմենական և Ասորեստա-
նեայց սեպաձևերուն ընթերցումը յա-
ջողի և վերը յիշած հեղինակաց ուրիշ
հատուածներ ևս յայտնուին: Եւսեբիո-
սի Քրոնիկոնին Ա մասին մէջ, էջ 40,
Բագմավէսն Աղեքսանդր՝ Բերսոսոսի մա-
տենէն քաղելով 86 թագաւորներ կը
հաշուէ Բաբելոնացւոց, նոյնն սկսեալ՝
ցկործանումն Բաբելոնի ՚ի Մարաց. իսկ
Մարաց 9 թագաւոր և 9 ալ բռնաւոր-
ներ (թագաւորներ): Այսպէս նաև
Քաղղէսացւոց 49, բայց ասոնց (Քաղ-
ղէսացւոց և Բաբելոնացւոց) թագաւորաց
36ին անուանքն միայն մեզի հասած
են, կամ իբրև թագաւորք Քաղղէսացւոց
և Բաբելոնացւոց կը ճանչցուին յանուա-

ներու ասէղ կռիւք կը ներկայացնեն, այսինքն
Բէլա և Հայկ, որոնք գեա. նոյն երկիրներու մէջ
կենդանի կը պահուէին, իբր օրինակ Ս. Գրոց
յիշած հակայից:

հէ 'ի ժամանակորայն . իսկ Մարտի 8
միայն, ըստ ոմանց 7, և ըստ այլոց 5 :

Ասոր գոհացուցիչ պատասխանը հան-
դերձ եզրակացութեամբ վերջը թող-
լով առ ժամս կ'ըսենք . Սերնն մարի-
բասեան պատմութեան տղրիւրն ևս
ըստ ընդհանուր և զլիսուոր կէտերուն՝
այն վերը յիշած քաղղէարէն մատեանն
եղած է . հելլէն թարգմանութեամբ, և
կամ ահոր համաձայն հնոյն Հայաստա-

Կըշարունակութի .

նի երդերն, որոնց վրայ իբրև 'ի հիման,
կանգնեցին Հայոց պատմութիւնը, մա-
սամբ Արիւդենոս և իմաստուն ասորին,
և մասամբ ալ Մ. Խորենացի, ճոխացը-
նելով զայն Հայաստանի մինչև այն ժա-
մանակ կենդանի մնացած՝ ստոյգ և բաղ-
մաթիւ աւանդութեամբ վիպաաւանդ
թեալն և թուելեաց կոչուած երգերով
և գրոյցներով :

Հ. ԲԱՐՏԵԼ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ի ԳԵՐԵՋՄԱՆ ԳՐԻՍՏՈՍԻ

Սուրբ Գերեզման յոյժ գովելի,
Համայն ազանց ես ցանկալի .
Առ քեզ գիմնիք աղերսալի
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :
Աթոռ եղեր դու Արարիչն,
Հանգըստարան անմահ փրկիչն
Չարչարելոյն 'ի փայտ խաչին,
Լուսածառալ սուրբ Գերեզման :
Այն որ 'ի նմին ահեղ գոչեաց՝
երեքօրեայ 'ի քեզ ննջեաց .
Ինքնն զարթեալ և զմեզ փրկեաց .
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :
Դու ես պարծանք քրիստոնէից
Յոյս յարութեան մեզ համայնից .
Ըզբեզ՝ Աստուած փառօք ելից,
Լուսածառալ սուրբ Գերեզման :
Ի սրովբէից օրհնաբանիս
Ի քրովբէից երկրպագիս,
Քան զարեղակն պայծառ փայլիս,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :
Լուսապայծառ սուրբ Գերեզման,
Աստուածորդւոյն տեղի թաղման,
Անաճառութեան հոռոյն բուրման,
Անաճառալ սուրբ Գերեզման :
Սուրբ և մաքուր Գերեզման կոյս,
Քրիստոնէից պարծանք և յոյս,
Ի քէն բղխէ միշտ պայծառ լոյս,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :

Յոյժ փափագեմք օրհնեալ տեսոյդ
Եւ կարօտեմք քաղցրիկ գեղոյդ,
Երկրպագեմք քարիդ հողոյդ,
Լուսածառալ սուրբ Գերեզման :
Արժանացոյ քում տեսութեան
Եւ բայ մեզ գուռն ողորմութեան,
Գանդի զին եմք անդին արեան .
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :
Գերեզման ես լուսափայլեալ
Արանշելափառ տաճար կազմեալ,
Տեառն Աստուծոյ առն անուանեալ,
Լուսածառալ Սուրբ Գերեզման :
Սարսափելի սուրբ հրեշտակաց
Եւ սոսկալի հոգեղինաց,
Դու յարկ եղեր Բանին կենաց,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :
Ի քիմս անոյշ հոտ ծաւալի
Բզսեամբս քո համբուրդի,
Ջքեզ տեսողաց բիւր երանի,
Լուսածառալ սուրբ Գերեզման :
Ըղբերեզմանդ կնքեալ բանան,
Յընծութեամբ 'ի ներքս ընթանան,
Չլոյս քո տեսեալ ուրախանան,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :
Ի թաղելոյն 'ի քեզ՝ մաղթեմք,
Արժանանալ տեսոյդ խնդրեմք,
Նրմա և քեզ երկրպագեմք,
Լուսածառալ սուրբ Գերեզման :

(Ի ՁԵՆՁԱՐԻ ԵՐԿՐԱՆԵ՛)